# Ազգ
Azg

1 ԱՊՐԻԼ 2011 ՈՒՐԲԱԹ 57(4676)

ISSN: 1829-1651


## Ցեղասպանության ուրացման համար պատիժ սահմանող օրինագիծը վերստին Ֆրանսիայի Սենատի օրակարգում

2001-ի հունվարի 29-ին Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակն ու վարչապետ Լիոնել Ժոսպենը ստորագրեցին Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքը, որն ընդունել էր Ազգային ժողովը: 2006-ի հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը հաստատեց ցեղասպանության ուրացման համար պատիժ սահմանող օրինագիծը: Սակայն երբ դա ներկայացվեց Սենատ, մի խումբ ֆրանսիացի պատմաբաններ, տուրք տալով «պատմությունը պատմաբաններին թողնելու» թուրքական պետական թեզին, առարկեցին: Իսկ Թուրքիան բուռն հակազդեցություն ցուցաբերեց: Այսպիսով, Սենատը կասեցրեց օրինագծի վավերացման ընթացքը, բայց՝ ժամանակավորապես:

Ինչպես մարտի 31-ին կայքէջում նշել է թուրքական NTV-ն, ֆրանսահայության անցյալ տարվա ընթացքում ծավալված լոբբիստական գործունեության շնորհիվ նույն բովանդակությամբ երկու օրինագիծ է ներկայացվել Ֆրանսիայի Սենատ, որոնք Հայոց ցեղասպանությունն ուրացողների համար մինչեւ 45 հազար եվրո տուգանք եւ 5 տարի ազատազրկում են նախատեսում:

Գաղտնիք չէ, որ ներկա պահին Սենատում մեծամասնություն կազմող աջ ուժերը, որոնց թվում նաեւ իշխող կուսակցությունը, բացասաբար են մոտենում օրինագծին: Հակառակ դրանց, ընդդիմադիր Սոցիալիստական կուսակցության մոտեցումը միանգամայն դրական է: Ըստ թուրքական NTV-ի, հայկական լոբբին շփումների մեջ է մտել Սոցիալիստական կուսակցության նախագահ Մարտին Օբրիի հետ, որն էլ նամակով դիմել է Սենատում սոցիալիստների խմբակցության առաջնորդ Ժան Պիեռ Բելին, պահանջելով օրակարգում ընդգրկել Հայոց ցեղասպանության ուրացման համար պատիժ սահմանող օրինագիծը:

Խմբակցության ղեկավարները, «Հյուրիեթի» վկայությամբ, մայիսի 4-ին օրինագիծը Ֆրանսիայի Սենատում օրակարգ մտցնելու հարցով հանդես են գալու: Ի դեպ, Սենատի առաջիկա ընտրությունները նշանակված են նոյեմբերին: Ենթադրվում է, որ ընտրությունների արդյունքում այնտեղ մեծամասնությունը կանցնի Սոցիալիստական կուսակցությանը: Հ. Չ.

## Չեզոք եւ անկողմնակալ Շվեյցարիան կարեւորում է Երեւանի հետ ակտիվ գործակցությունը

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Երեկ մեկնարկեց Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Միշելին Քալմ-Ռեյի առաջին պաշտոնական երկօրյա այցը Երեւան: Սարգսյան-Քալմի-Ռեյ առանձնազրույցից, այնուհետեւ հայ-շվեյցարական ընդլայնված կազմով հանդիպումից հետո երկրների նախագահները ասուլիս տվեցին: Ընդգծելով, որ ինքը «մեծ հաճույքով» է Երեւանում ընդունում տիկին նախագահին՝ Հայաստանի նախագահը նկատեց, որ. «չեզոք եւ անկողմնակալ ակտիվ քաղաքականության հարուստ փորձ ունեցող Շվեյցարիան մշտապես հետաքրքրություն է ցուցաբերել մեր երկրի եւ մեր տարածաշրջանի նկատմամբ»: ՀՀ նախագահը հայ ժողովրդի անունից իր շվեյցարացի գործընկերոջը հայտնեց երախտագիտություն՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար:


ARMENPRESS

### Տնտեսական գործակցության երկկողմ «ամուր կամք»

Ասուլիսի ընթացքում ՀՀ նախագահը նշեց, որ Հայաստանը շահագրգռված է հայ-շվեյցարական տնտեսական ծրագրերը զարգացնելու, դեպի Հայաստան շվեյցարական ներդրումները խրախուսելու հարցում՝ հաշվի առնելով գործակցության առկա դրական փորձը. «Որպես այդ համագործակցության հաջողված օրինակ կարող եմ բերել շվեյցարական ընկերությունների մասնակցությունը Ծաղկաձորի, Ջերմուկի եւ Տաթեւի զարգացման ծրագրերում» ասաց Քալմի-Ռեյը, նկատելով, որ երկկողմ տնտեսական հարաբերությունները լավ են, նշեց. «Մեր ապրանքաշրջանառությունը դեռ մնում է բավականին համեստ մակարդակի, եւ կարիք կա զարգացնելու: Կա չօգտագործված ներուժ եւ Շվեյցարիայի իշխանություններն իհարկե կողմ են, որ տնտեսական հարաբերությունները ավելի զարգանան», ասաց Քալմի-Ռեյը՝ հավելելով, որ այստեղ առկա է «երկկողմ ամուր կամք»:

### Հայաստանը Ժնեւում կլինի «պատվավոր մասնակից», Քալմի-Ռեյը կրկին հրավիրվեց Հայաստան

Հայ-շվեյցարական մշակութային համագործակցության ամրապնդման եւ զարգացման գործում նույնպես նկատելի է «երկկողմ ամուր կամք»: «Մենք համոզված ենք, որ մշակույթի ոլորտում համագործակցությունը նպաստում է մեր ժողովուրդների փոխճանաչման զարգացմանն ու բարեկամության ամրապնդմանը», նշեց ՀՀ նախագահը՝ ընդգծելով, որ այս տարվա ապրիլ-մայիս ամիսներին Ժնեւում կայանալիք Գրքի 25-րդ միջազգային ցուցահանդեսին Հայաստանը մասնակցելու է «Պատվավոր հյուր»-ի կարգավիճակով. «Ես էլ սիրով հրավիրում եմ տիկին նախագահին՝ մասնակցելու 2012-ին Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակված Երեւանում կայանալիք միջոցառումներին»: Տիկին Քալմի-Ռեյը պատասխանեց ժպիտով:

Տես էջ 3

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Շառլ Ազնավուրի «Ցածր ձայնով. Կյանքս մի շանսոն»՝ Գերմանիայում տպագրված նրա գրքի եւ այս առիթով Քյոլնում օրերս երգչի հետ հանդիպման գերմանական մամուլի արձագանքներն ըստ Անահիտ Հովսեփյանի: Հայ գրականության Դոն Քիշոտը՝ Արշակ Չոպանյանը ժամանակի գրական հարաբերություններում: Մահարի-Չոպանյան կապեր՝ Գրիգոր Աճեմյանի ներկայացմամբ: Հայոց լեզվի երաժիշտը: Երաժշտագետ Օլյա Նուրիջանյանի հանդիպումը Տիգրան Մանսուրյանի հետ: Գրական մասունքներ. Ալբերտ Մուշեղյան. «Եղերերգ Եղիշե Չարենցին»: Անդրադարձ՝ Կարպիս Սուրենյանի «Ոգու ամրոցներ» էսսեի Բ հրատարակության: Էլիզաբեթ Թեյլորի հավերժացող փայլը-ըստ Հակոբ Վարդիվառյանի: Մ. Բ.

## Հայազգի Աջեմօղլուն համաձայն չէ լինել Թուրքիայի դեսպան

Մարտի 29-ի համարում «**Ազգը**» նշել էր, որ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հանդես գալով Ստամբուլում Wilton Park կազմակերպության կազմակերպած «Ժամանակակից աշխարհում Թուրքիայի նախաձեռնողական քաղաքականությունը» միջազգային համաժողովում, պատասխանելով «Ազգի» խմբագրի հարցին նշել էր, որ շուտով Թուրքիան հայազգի դեսպան կնշանակի Փարիզում: Հետագայում «Ազգը» պարզել էր, որ դեսպանի թեկնածուն պոլսահայ տնտեսագետ գիտնական Տարոն Աջեմօղլուն է, իսկ կառույցը, որտեղ նա պետք է դեսպան նշանակվեր Փարիզում գործող Տնտեսական զարգացման եւ համագործակցության կազմակերպությունն է (OECD): Դավութօղլուն նշել էր, որ ինքը ստացել է Աջեմօղլու հավանությունը, եւ նա կսկսի պաշտոնավարել մի քանի ամսից:

Սակայն երեկ, թուրքական Radikal պարբերականի փոխանցմամբ՝ ներկայումս ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնիկական ինստիտուտի (MIT) դասախոս Տարոն Աջեմօղլուն հանդես է եկել հայտարարությամբ՝ հերքելով թուրքական մամուլում տեղ գտած այն տեղեկությունները, թե ինքը համաձայնվել է նշանակվել Փարիզի OECD-ի (Տնտեսական զարգացման եւ համագործակցության կազմակերպություն) մշտական ներկայացուցչությունում որպես Թուրքիայի դեսպան: Աջեմօղլուն այս ամենը հայտարարել է իր ասիստենտ Լորեն Ֆահեյի միջոցով: «Պրոֆ. Աջեմօղլուն շատ զգացված է, որ իրեն առաջարկել են Փարիզի OECD-ում Թուրքիայի դեսպանի պաշտոնը, սակայն շարունակվող ծանր ակադեմիական աշխատանքների պատճառով նա մոտ ապագայում չի կարող ընդունել այն եւ այդ մասին ծանուցվել է թե Թուրքիայի վարչապետին եւ թե արտգործնախարարին», ասել է հայազգի տնտեսագետի ասիստենտը:

## Ցուցաստախտակները պահանջում են իրականացնել հույսերը




«Ժամանակն է կոնկրետ գործերով իրականացնելու հույսերը»: Սա է 2011 թվի Հայոց ցեղասպանության ցուցաստախտակի պատգամը: «Peace of Art» կորպորացիայի հովանավորությամբ պատրաստված ցուցաստախտակներն ապրիլի 4-ից կբարձրացվեն Ուոթերթաունի Մաունթ Օբըրն փողոցի սյուների վրա, տեղեկացնում է «Արմինյն միրըր սփեքթեյթր» շաբաթաթերթը: Իսկ Ֆոքսբորոյում, «Ժիլետ» մարզադաշտի մոտակայքում արդեն իսկ տեղադրված ցուցաստախտակը կոչ է անում «Ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Պատգամը հղում է 2009 թվին խաղաղության Նոբելյան մրցանակի արժանանալու առթիվ նախագահ Օբամայի խոսքերին, որոնցով նա այդ որոշումը որպես ավելի «գործողության կոչ» ընդունեց, քան իր ձեռքբերումների գնահատանք: «Peace of Art»-ի հիմնադիր եւ տնօրեն Դանիել Վարուժան-Հաճինյանն էլ այս տարվա ցուցաստախտակներով ցանկանում է հիշեցնել նախագահ Օբամային, որ հիմա է ժամանակը «կոնկրետ գործերով իրականացնելու հույսերը»:

Դանիել Հաճինյանը ծնվել է Սիրիայում, Եղեռնից մազապուրծ ընտանիքում: 1969-ին ներգաղթել է Հայաստան եւ սովորել Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1979-ին տեղափոխվել է Մ. Նահանգներ: Բոստոնի հայկական եկեղեցիներում ունի բազմաթիվ որմնանկարներ: Հ. Ծ.

## ICAO-ն տեղեկացնո՞ւմ է Ադրբեջանի՝ Ստեփանակերտի օդանավակայանի շահագործման վերաբերյալ նախազգուշացումների մասին

Շատ հաճախ ադրբեջանական դատողություններին անդրադառնալն ուղղակի իմաստազուրկ է: Սակայն երբ իրենց փորձագետ ու վերլուծաբան, քաղաքագետ ու մասնագետ ներկայացնող մարդիկ են փորձում իրականությանը չհամապատասխանող հայտարարություններ անել, արձագանքի անհրաժեշտություն է զգացվում:

Այդպիսի մի փորձագետ էլ, իր «յուրօրինակ» դատողություններով, «Heritage» հիմնադրամի փորձագետ Արիել Քոհենն է: «Թրենդի» փոխանցմամբ, Քոհենը գործակալության խնդրանքով մեկնաբանել է Ստեփանակերտի օդանավակայան թռիչքների առնչությամբ ստեղծված իրավիճակը: Ըստ այդմ, Քոհենը հայտարարել է, թե «Լեռնային Ղարաբաղի, այդ թվում՝ օդային տարածքը, միջազգային իրավունքի համաձայն, պատկանում է Ադրբեջանին»: Ուստի նման փորձագետի համար «հասկանալի չէ, թե ինչու է հայկական կողմը չվերթեր իրականացնելու մասին հայտարարում՝ ավելի լարելով իրավիճակը»:

Այն, որ Արիել Քոհենի համար Արցախը «ադրբեջանական տարածք» է, վկայում է նույն այդ փորձագետի՝ միջազգային իրավունքի տարրական նորմերին չտիրապետելու մասին: Սակայն առավել հետաքրքրական է, որ տարբեր երկրների ղեկավարների, տարբեր պաշտոնյաների կողմից քաղաքացիական ավիացիայի թռիչքներին խոչընդոտելու եւ ահաբեկչական հայտարարություններ անելու անընդունելիության մասին արված հայտարարությունների կողքին շատ է նշվում հարցը Միջազգային քաղավիացիայի կազմակերպության կողմից կանոնակարգվելու մասին: Իսկ վերջինիս անդամները, որոնց թվում են ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը, պարտավորություն են ստանձնել երբեւէ ռազմական ճայլեր չձեռնարկել քաղաքացիական ավիացիայի թռիչքների նկատմամբ:

Անեն դեպքում, պարզվում է, Հայաստանը նամակ է ստացել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունից՝ CAO-ից (International Civil Aviation Organization), որով ICAO-ն Երեւանին տեղեկացրել է Ադրբեջանի անհանգստությունն ու նախազգուշացումները Ստեփանակերտի օդանավակայանի շահագործման վերաբերյալ: Այդ լուրը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հաստատել է Հայաստանի քաղավիացիայի գլխավոր վարչության մամուլի քարտուղար Նելլի Չերչինյանը:

Վերջինս, սակայն, հրաժարվել է հայտնել նամակի բովանդակության մասին, չմեկնաբանելով, թե արդյոք Հայաստանի քաղավիացիայի գլխավոր վարչությունը պատրաստվո՞ւմ է պատասխանել նամակին եւ ի՞նչ է պատասխանելու: Այսինքն՝ ICAO-ն արձագանքել է, բայց ինչպե՞ս՝ մնում է անհայտ: Ա. Հ.

# Հայաստանում կստեղծվի ճգնաժամային կառավարման ժամանակակից կենտրոն

*«**Ազգ**»-ի հարցերին պատասխանում է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը***



**- Աշխարհում հատկապես վերջին շրջանում արձանագրվող տարաբնույթ արտակարգ իրավիճակներն ու ճգնաժամերը ստիպում են մտածել Հայաստանում նման իրավիճակների դեպքում հնարավոր հետեւանքների մասին: Մենք պատրա՞ստ ենք հակազդել նման երեւույթների:**

- Արտակարգ իրավիճակներն ու տարաբնույթ ճգնաժամերը դժվար կանխատեսելի, հաճախ՝ անկանխատեսելի, կտրուկ զարգացող երեւույթներ են, որոնք պահանջում են հակազդման լուրջ հնարավորությունների ստեղծում, կառավարման կայուն եւ ներդաշնակ գործող համակարգ, ոլորտում քաղաքականության իրականացման գործուն մեխանիզմներ, ինչը հնարավոր է իրականացնել տեղեկատվական հոսքերի կառավարման ժամանակակից համակարգերի առկայության պայմաններում, որոնց առանցքն է կազմելու ճգնաժամային կառավարման կենտրոնը, որը, լինելով օպերատիվ կառավարման կարեւորագույն օղակ, կոչված է լինելու լուծել իր առջեւ դրված առօրյա խնդիրները: Ներկայումս աշխատանքներ են տարվում արտակարգ իրավիճակների նախարարությունն անհրաժեշտ շենքային պայմաններով ու տեխնիկական հագեցվածությամբ ապահովելու համար, ինչը հնարավորություն կտա արտակարգ իրավիճակների եւ լուրջ ճգնաժամների պարագայում արդյունավետ կառավարում ապահովելու:

Հայաստանում նախատեսվում է ստեղծել ճգնաժամային կառավարման ժամանակակից կենտրոն, ինչը թույլ կտա ոչ միայն լուծել ոլորտին առնչվող տարաբնույթ խնդիրները, այլեւ նոր որակ հաղորդել ճգնաժամերի կառավարման գործընթացին՝ ապահովելով երկրում արտակարգ իրավիճակների ժամանակ կառավարման օպերատիվությունը, տեղեկատվության ժամանակակից եղանակներով ձեռքբերումն ու կառավարումը, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների փոխհամաձայնեցված գործողությունների ապահովումը՝ բարձրացնելով ճգնաժամերի կառավարման արդյունավետությունը:

**- Ի՞նչ գործառույթներ է ունենալու նոր կենտրոնը եւ ի՞նչ խնդիրներ է լուծելու:**

- Կենտրոնի գործառույթները նախատեսված են ինչպես ամենօրյա, այնպես էլ՝ ռազմական դրության եւ արտակարգ իրավիճակների պայմաններում գործելու համար: Լուծվելու են հետեւյալ հիմնական խնդիրները՝ ճգնաժամային կառավարման ոլորտում պետական միասնական քաղաքականության իրականացում, ճգնաժամային կառավարման գործընթացների պլանավորում, դրանց կատարման նկատմամբ մոնիտորինգի կազմակերպում եւ հսկողության իրականացում, արտակարգ իրավիճակների դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության եւ այլ նախարարությունների ու գերատեսչությունների ուժերի ներգրավում ու դրանց միջեւ համագործակցության կազմակերպում, արտակարգ իրավիճակների ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության ընդունում, ռիսկերի գնահատում, դրանց նվազեցման ուղղությամբ որոշումների ընդունում, արտակարգ իրավիճակների եւ պատերազմների, ինչպես նաեւ՝ ահաբեկչությունների ծագման դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների, բնակչության կենսագործունեության ապահովման գործընթացի օպերատիվ ու արդյունավետ կառավարում, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ՝ միջազգային գործընկերների ազդարարման եւ իրազեկման իրականացում, կառավարման մարմինների միջեւ արտակարգ իրավիճակների վերաբերյալ միասնական տեղեկատվական դաշտի ստեղծում ու վերջինիս կառավարում:

Նշված խնդիրների նպատակաուղղված եւ արդյունավետ լուծումն ապահովելու համար նախատեսվում է ճգնաժամային կառավարման կենտրոնը հագեցնել ժամանակակից սարքերով ու սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով, կապի եւ ազդարարման միջոցներով, ծրագրային փաթեթներով, երկրատեղեկատվական համակարգերով, թվային քարտեզներով, վտանգավոր, հատուկ, կարեւորագույն օբյեկտների եւ մարդկանց զանգվածային կուտակման վայրերի շուրջօրյա տեսավերահսկման եւ ավտոմատացված կառավարման համակարգերով եւ անհրաժեշտ տրանսպորտային միջոցներով: Ստեղծվելու են պարբերաբար թարմացվող, բնական եւ տեխնածին վտանգների վերաբերյալ տեղեկատվական բազաներ, իրականացվելու են մոնիթորինգի, կանխատեսման եւ պլանավորման լայնածավալ գործընթացներ:

Այսպիսով, Ճգնաժամային կառավարման ժամանակակից կենտրոնի հիմնումը, ներառելով ոլորտում առկա միջազգային փորձն ու կիրառվող տեխնոլոգիաները, հնարավորություն կտա որակական նոր մակարդակի բարձրացնել արտակարգ իրավիճակներում եւ պատերազմի պայմաններում մեր երկրի կառավարման հնարավորությունները:

# Հրազդանում հանքի մշակման համար ընկերությունը հրավիրելու է չինացի բանվորների

Երեկ Հրազդանում տեղի է ունեցել բողոքի ակցիա՝ մասնակցությամբ հրազդանցիների եւ մի շարք հասարակական-բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչների: Նրանք իրենց անհանգստությունն ու անհամաձայնությունն են հայտնել քաղաքում շահագործվող երկաթի հանքավայրի առնչությամբ եւ որոշում կայացրել նամակ ուղարկել նախագահ Սերժ Սարգսյանին եւ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

«**Ազգ**» օրաթերթը վերջերս անդրադարձել էր չինական Fortune Oil-ի գործունեությանը, որը պատրաստվում է Հայաստանում 500 մլն դոլարի ներդրում կատարել: Հունվարին վերոնշյալ ընկերությունը ձեռք է բերել Bounty Resources Armenia ընկերության 35 % մասնաբաժինը, որը տնօրինում է հայկական երկաթի 3 հանքավայր: Դրանց հաստատված եւ նախնական գնահատված պաշարները կազմում են 1.83 մլրդ տոննա: Հանքերը գտնվում են Հրազդան, Աբովյան քաղաքներում եւ Սվարանց գյուղում: Հրազդանում շահագործվող հանքավայրը քաղաքից 800 մետր եւ Հրազդան գետից 1.5 կմ հեռավորության վրա է: Հանքավայրը կարող է քաղաքի՝ ծանր մետաղներով աղտոտման եւ քաղաքացիների մեջ վտանգավոր հիվանդությունների առաջացման պատճառ դառնալ: Նախատեսվում է, որ Հրազդանի հանքավայրում հանքաքարի արդյունահանումը կսկսվի 2014-ին եւ կհասնի տարեկան 1.5-2 մլն տոննայի:

Ըստ շրջանառվող լուրերի՝ 3 հանքերը պատկանում են բնապահպանության նախկին նախարար Վարդան Այվազյանի որդի Սուրեն Այվազյանին եւ պատգամավոր Տիգրան Արզաքանցյանին: Հանքավայրի շահագործմամբ հատկապես հարվածի տակ կհայտնվեն երեխաները: Հանքավայրից 2 կմ հեռու 3 դպրոց կա, հարեւանությամբ՝ մի քանի աղբյուրներ, որոնցից օգտվում են բնակիչները: Հետեւաբար հանքի շահագործումից ծանր մետաղներով կաղտոտվի ոչ միայն ոռոգման, այլեւ խմելու ջուրը:

Հրազդանը հանրապետության ամենաաղտոտված քաղաքներից մեկն է: Օդում աղտոտվածությունը մի քանի անգամ գերազանցում է նորմանը: Դրա գլխավոր պատճառը ցեմենտի գործարանի շահագործումն է: Բնապահպանները համոզված են՝ երկաթի հանքավայրի շահագործումը էկոլոգիական աղետ կլինի քաղաքի համար: «**Ազգ**»-ի հետ հեռախոսազրույցում «Էկոլուր» ՀԿ-ի նախագահ **Ինգա Զառաֆյանն** ասաց, որ հանքի շահագործման վերաբերյալ լսումներ են եղել, սակայն հասարակական կարծիքը որեւէ մեկը հաշվի չի առել: «Երկու տարի առաջ Հրազդանի քաղաքապետարանում տեղի ունեցան «լսումներ», սակայն որեւէ կազմակերպություն չէր մասնակցում: Անգամ մարզպետարանի (իսկ քաղաքապետարանն ու մարզպետարանը նույն շենքում են գործում) բնապահպանական վարչության աշխատակիցները չէին իմացել: Հետեւաբար շատ տարօրինակ պայմաններում է հանքի շահագործումը հանձնվել Fortune Oil ընկերությանը»: Ինգա Զառաֆյանը հավելում է, որ Հրազդանի քաղաքապետարանի հորդորները, որ հանքի շահագործմամբ աշխատատեղեր կբացվեն, իրականությանը չեն կարող համապատասխանել: «Համենայն դեպս մնացած երկրներում, որտեղ չինական կազմակերպությունը գործունեություն է իրականացնում, մի ավանդույթ է գործում: Հանքի մոտակայքում ավան են կառուցում, որտեղ տեղավորում են Չինաստանից եկած բանվորներին»: Զառաֆյանը չի բացառում, որ կկառուցվի այսպես կոչված չինական ավան՝ չինացի բանվորների համար:

Ստացվում է, որ չինական կազմակերպությունը Հայաստանում հանք է մշակում, միլիարդներ վաստակում, հսկայական վնաս հասցնում էկոլոգիային, գյուղատնտեսությանն ու քաղաքացիների առողջությանն ու իր հանքում աշխատելու համար կարող է բանվորներ հրավիրել դրսից:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ*

## 60 հազար ընտանիքներ կօգտվեն գազի մեղմացված սակագներից

**Արագածոտնի մարզում՝ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրոցանը երեկ տեղի ունեցավ կառավարության արտագնա նիստը, որտեղ նախ լսվեց Արագածոտնի մարզպետի 2010թ. գործունեության եւ մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի հաշվետվությունը: Այնուհետեւ կառավարությունը որոշում է ընդունել անապահով ընտանիքներին մատակարարվող բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների մասին: Համաձայն դրա, 2011թ. ապրիլի 1-ից մինչեւ 2012թ. մարտի 31-ը բնական գազ սպառող անապահով ընտանիքներից 300 խմ բնական գազի քանակության համար վճարումները կկատարվեն հաստատած սակագնից նվազեցված գնով՝ 100 դրամ 1 խմ-ի համար: Վարչապետ Տիգրան Սարգսյանի դիտարկմամբ՝ սույն որոշումից կօգտվեն երկրի շուրջ 60 հազար անապահով ընտանիքներ:**

## Ավտոմեքենաների տեխզննման կարգը կփոփոխվի

**Հայաստանում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման երեկ կառավարության ընդունած նոր կարգի համաձայն, տարբերակված մոտեցում կցուցաբերվի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների եւ ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործընթացի, կտրոնների տրամադրման եւ հաշվառման սկզբունքներում: Ըստ վարչապետ Տիգրան Սարգսյանի, մոնիտորինգով բացահայտվել են բազմաթիվ թերություններ, մասնավորապես այն, որ ավտոմեքենաների տեխզննությունը ձեւական բնույթ է կրում, քաղաքացիներն օրենսդրությամբ չսահմանված վճարումներ են կատարում կամ նույնիսկ ավտոմեքենաներն ընդհանրապես չեն ներկայացնում տեխզննման: Նոր կարգով, քաղաքացիները հնարավորություն կունենան իրենք ընտրելու տեխզննման այն երեք տասնյակ կայաններից մեկը, որտեղ կուզենային անցկացնել այդ գործընթացը: Վարչապետի հավաստմամբ, հաջորդ քայլը լինելու է տվյալ խնդրի լուծման մեջ ապահովագրական ընկերությունների ներգրավումը, ինչի շնորհիվ կգործի փոխվերահսկողության սկզբունքը:**

## 10-ի փոխարեն կտրամադրվի 15 ավտոմեքենա

**Կառավարության երեկվա որոշմամբ մայիսի 1-ից (ապրիլ ամսվա արդյունքով) ՀԴՄ կտրոնների յուրաքանչյուր վիճակահանությանը 10-ի փոխարեն կտրամադրվի 15 ավտոմեքենա, միաժամանակ կդադարեցվի դրամական պարգեւավճարների վճարումը:**

## «Ամերիաբանկ»-ն ընդլայնում է բանկոմատների ցանցը

**Ինչպես տեղեկացանք «Ամերիաբանկից», բանկը շարունակում է ընդլայնել կորպորատիվ հաճախորդների հետ համագործակցությունը՝ աշխատավարձային ծրագրերի շրջանակներում: Նրանց աշխատակիցների համար բանկոմատներից օգտվելու առավել հարմարավետ պայմաններ ապահովելու նպատակով բանկը ընդլայնում է բանկոմատների ցանցը ինչպես Երեւան քաղաքում, այնպես էլ ՀՀ մարզերում: Ներկայումս բանկոմատների քանակը 69 է, որոնցից 54-ը Երեւան քաղաքում, 2-ը՝ ԼՂՀ-ում, իսկ 13-ը՝ ՀՀ մարզերում: Մինչեւ տարեվերջ «Ամերիաբանկը» նախատեսում է բանկոմատների քանակը հասցնել ավելի քան 85-ի, միաժամանակ ընդլայնել նաեւ բանկոմատների աշխարհագրական ընդգրկվածությունը՝ տեղադրելով դրանք հաճախորդների համար նախընտրելի տարածքներում:**

**Ա. Մ.**

## Բանկ կտրելու փորձ արած մարդը ապահովված ընտանիքից է

**Մարտի 29-ին բանկ թալանելու փորձ արած ոստիկանության կապիտան Արթուր Հակոբյանի արարքը ցնցել է նրա հարազատներին, ընկերներին եւ հարեւաններին: News.am կայքի մասնագիտացմամբ՝ հարազատները տարակուսած ու զարմացած են, թե ինչը կարող էր ֆինանսապես ապահովված, բարեկեցիկ կյանքով ապրող մարդուն նման արարքի դրդել: Մանավանդ պարզվել է, որ Արթուր Հակոբյանի ընտանիքին է պատկանում Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի Չեխովի փողոցում տեղակայված բնակելի 6-հարկանի շենքը, ինչպես նաեւ մի քանի առանձնատուն Երեւանի տարբեր հատվածներում: Նրա ընտանիքը Արտաշատից Երեւան է տեղափոխվել 1972 թվականին: Ունի երկու եղբայր, որոնցից մեկը մասնագիտությամբ երաժիշտ է, մյուսը երկար տարիներ աշխատում է ազգային անվտանգության համակարգում: Հարազատները պատմեցին, որ 33-ամյա Հակոբյանը ոստիկանության համակարգում է 1996 թվականից եւ Նոր Նորքի բաժնին կից պահպանության բաժնի պետի պաշտոնը կարճ ժամանակ առաջ է ստանձնել: Ունի երկու բարձրագույն կրթություն՝ ավարտել է Գյուղատնտեսական ակադեմիան եւ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, ամուսնացած է, ունի երկու անչափահաս երեխա: Վարկած կա, թե Արթուրը թմրամոլ է եղել եւ բանկ թալանելու արկածախնդրությանն է դիմել թմրանյութի ազդեցության տակ: Հարազատները կտրականապես հերքում են Արթուրի թմրամոլ լինելու վարկածը՝ եթե նա թմրամոլ լիներ, ապա նրան ոչ ոք չէր երաշխավորի մտնել համակարգ, կապիտան լիներ, երեք փոխգնդապետ աշխատող ունենար: Նրա մտերիմներից մեկը նկատել է, որ եթե Արթուրը «բանկ կտրելու» նպատակ ունենար, ապա տեղը տեղին կպատրաստվեր, գոնե դիմակ կկրեր, ատրճանակը, որով բանկ էր մտել, կլիցքավորեր, եւ ամենակարեւորը՝ բանկ կմտներ օրվա այն ժամին, երբ բանկի փողերը հաշվապահական հանձնելու ժամը լիներ: Հարազատներն անգամ ենթադրություն են հնչեցրել, թե գուցե Արթուրին այդ արարքին «զաստավիս» են արել ինչ-ինչ անձինք, ովքեր աչք են ունեցել նրա զբաղեցրած պաշտոնի վրա: Ավելացնենք, որ բանկ կողոպտելու փորձ արած կապիտանը դեռ առողջական նորմալ վիճակի չի եկել եւ ոչ մի ցուցմունք չի տվել:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Կոչ պատգամավորներին. «Մի քիչ էլ խղճի կոճակները սեղմեք»

Փոխքաղաքապետ **Կամո Արեյանի** մեկնաբանությամբ՝ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի որոշումը՝ արգելել բացօթյա առեւտուրը, ոչ թե միջոցառում էր, այլ օրենքի պահանջի կատարում: «Կարեն Կարապետյանն օգտվել է օրենքով իրեն վերապահված լիազորությունները կյանքի կոչելու իրավունքից, իսկ օրենքը բացառում է ապրանքների վաճառք փողոցում: «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքով թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղեւնիների ու սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային հյութերի ու զովացուցիչ ըմպելիքների առեւտուրը: Սա ենթադրում է, որ այլ ապրանքների վաճառքը օրենքով բացառվում է», ասաց նա ԱԺ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նիստում:

Արեյանի գնահատմամբ՝ կիրառված օրենքը բավականին հաջողված է: «Առեւտրականները վաճառվող ապրանքները տեղադրում էին մայթերին, երբ ունեին առեւտուր անելու համար հատկացված տարածքներ՝ խախտելով մայրաքաղաքի սանիտարա-հիգիենիկ իրավիճակն ու խաթարում Երեւանի արտաքին տեսքը: Գիտակցելով, որ միայն արգելելով հարցը չի կարող լուծվել, քաղաքապետարանում հասկացան, որ բախվում են սոցիալական լուրջ խնդրի: «Ո՞ւր գնան այդ մարդիկ» հարցին չէր կարող պատասխանել ոչ ԱԺ-ում ընդունված օրենքը, ոչ էլ այն իրականացնող քաղաքապետը:

Քաղաքապետարանում վերջերս հաստատվել է 8 մինիշուկաների նախագիծը: Բացօթյա առեւտուրը արգելվել է տարեսկզբին, սակայն քաղաքապետարանը միայն երեք ամիս անց է քննարկում ու հաստատում մինիշուկաների նախագծերը: Գուցե անհրաժեշտ էր մինչ օրենքի կիրառումն ու բացօթյա առեւտրի արգելումը հաշվի առնել յուրաքանչյուր մանրուք, այլ ոչ թե հիմքը գցելու փոխարեն տանիքը կառուցել: Մինչ մինիշուկաների կառուցումը մի քանի տասնյակ փողոցային առեւտրով զբաղվողների քաղաքապետարանը դարձրեց գործազուրկ:

Բացի մինիշուկաներից, որոնք դեռ պետք է իրողություն դառնան, քաղաքապետարանն առեւտրականներին առաջարկում է աշխատել Երեւանում գործող 18 շուկաներում: Արեյանի տվյալներով՝ շուկաներում առկա 4242 տաղավարից միայն 1160-ն է զբաղված: Մինչդեռ բացօթյա առեւտրով զբաղվող առեւտրականներից մեկը նրան հակադարձեց՝ փաստելով, որ քաղաքապետարանն այս ուսումնասիրությունն իրականացրել է տարվա այն եղանակին, երբ գյուղացին իր մթերքը չի բերել Երեւան: «Նման մի ուսումնասիրություն կատարեք ամռանն ու աշնանը ու կտեսնեք, որ շուկաներում 10 ազատ տաղավար էլ չի մնում»:

Փոխքաղաքապետի մեկնաբանությամբ՝ բացօթյա առեւտուրը շատ լուրջ վտանգ է պարունակում. կոռուպցիոն ռիսկերը մեծ են ու դրանից տուժում է պետական բյուջեն: «Առեւտրականներն իրենց առեւտուրը իրականացնելու համար վարձահատույց էին լինում, բայց ո՞ւմ. այդ փողերը որեւէ կերպ չէին երեւում պետական միջոցներում: Իսկ հիմա խտառ վերացվել են այդ ռիսկերը, քանի որ առեւտուրը թույլատրվում է միայն օրենքով՝ համապատասխան վայրում ու համապատասխան լիցենզիա ունենալու դեպքում»:

Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Հովհաննես Մարգարյանը** մտադրվել էր միայն ձայնի իրավունք տրամադրել պաշտոնյաներին՝ փոխքաղաքապետ Կամո Արեյանին, էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսյանին: Նա փոխքաղաքապետի ելույթից հետո հրաժարվեց ձայն տալ Արծվիկ Մինասյանին: Վերջինս մի քանի անգամ ձեռքը բարձրացրեց եւ արձագանքման իրավունքով ցանկանում էր խոսել: Սակայն Մարգարյանը ելույթի հրավիրեց էկոնոմիկայի փոխնախարարին: Հենց դա վերջնականապես հունից հանեց ու բարկացրեց հավաքվածներին: Վերջիններս աղմուկ-աղաղակ բարձրացրին, յուրաքանչյուրն իր ցավն ու խնդիրն էր ներկայացնում: Մոտ 15 րոպե Մարգարյանը չէր կարողանում կարգ ու կանոն հաստատել. նիստը ընդհատեց: Ընդմիջմանը Մինասյանն ու Մարգարյանը վիճաբանում էին: Դաշնակցական պատգամավորը ՕԵԿ պատգամավորին մեղադրեց ԱԺ կանոնակարգը խախտելու մեջ:

Խորհրդարանում միայն կռիվ տալուց հետո Մարգարյանը թույլ տվեց առեւտրականներին իրենց խնդիրը ներկայացնել:

Իր խոսքերով՝ չդիմանալով «բյուրոկրատական կապիկություններին» 75-ամյա **Լեւոն Ուլիխանյանը** հարկադրված ընդմիջեց լսումների՝ կառավարությանն ու քաղաքապետարանին ձեռնտու հանգիստ ընթացքն ու պատմեց, որ արդեն 3 ամիս յոլա է գնում 25.000 դրամ թոշակով:

«Դրանով անգամ գազի փող չես կարող վճարել: Հիմա սոված ու տկլոր հասել եմ խորհրդարան: Հասել եմ, որ ասեմ՝ որպես ի՞նչ եք մեզ էստեղ բերել, որ մեզ ձայն չտան, մենք ձեր լոլոները լսենք: Կուշտը սովածին մեծ-մեծ բրդում է»:

Լեւոն պապին բակում աճեցրած կանաչին է վաճառում: «Օրական մի քանի հարյուր դրամ գումար եմ ստանում, դրանով մի հաց եմ առնում, որ գոյատեւեմ: Կամ ինձ թույլ տվեք աշխատել, կամ էլ 30.000 դրամով պահակի մի աշխատանք ճարեք, գնամ էս տարիքիս պահակություն անեմ, որ ինձ պահեմ: Եթե չէ, ուղարկեք ուրիշ երկիր, գնամ էնտեղ մեռնեմ»:

Այս խոսքերը կարծես ազդեցություն թողեցին ՕԵԿ պատգամավորի վրա, որը «Լյովայով» դիմելով Լեւոն պապին՝ ասաց, որ մտահոգված է:

Երեկ տիկին **Ալլայի** տանը էլեկտրաէներգիան անջատել են, որովհետեւ 3000 դրամ կազմող պարտքը չէր կարողացել վճարել: «Մեզ էլ դուր չի գալիս այդ աշխատանքը, բայց ի՞նչ անենք, այլ ճար չկա: Շուկաներում առեւտուր չի լինում, որովհետեւ ոչ ոք չի գալիս: Ժողովրդին ընդդիմադիր դարձնում են: Մի ժամանակ հացն ու պանիրը աղքատի ուտելիք էին, հիմա պանիրն էլ թանկացրիք, դարձրիք դելիկատես, որ աղքատը մնա չոր հացի հույսին: Դուք ըստեղից դուրս չեք գալիս, չեք տեսնում, թե երկրում ինչ է կատարվում: Դուք կոճակներ եք սեղմում, մի քիչ էլ խղճի կոճակները սեղմեք» ասաց տիկին Ալլան:

**Հենրիկ Հովհաննիսյանն** արդեն 15 տարի բացօթյա առեւտրով է զբաղվում:

«Երկու համալսարան եմ ավարտել, սակայն կրճատման տակ ընկա ու զրկվեցի աշխատանքից: Դրսում պտուղ ու բանջարեղեն էի վաճառում: Կարապետյանի որոշումից հետո 15 օր աշխատեցի Զեյթունի շուկայում, բայց վնասով: Եղածն էլ շատ էժան գնով վաճառեցի, որ չփչանար: Մարդիկ շուկաներ չեն գալիս, որովհետեւ ամեն քայլափոխի կան խանութներ, սուպերմարկետներ: Մենք ընդամենը չենք ցանկանում սոված լինել»:

ՀՅԴ խմբակցության պատգամավոր **Արծվիկ Մինասյանը** փաստեց, որ օրենքն ընդունվել է 2004-ին, 2007-ին օրենքում փոփոխություններ են մտցվել, սակայն միայն 4 տարի անց է օրենքը կիրառվում: «Հետեւաբար նախորդ քաղաքապետներն ու թաղապետները օրենք են խախտել, թույլ են տվել բացօթյա առեւտուր իրականացնել ու դրսեւորել անգործություն, հետեւաբար պետք է նրանց պատասխանատվության ենթարկել: Իհարկե նրանք իմացել են օրենքի մասին, սակայն առաջնային են համարել քաղաքացիների տարրական գոյության ապահովումը: Չեն փորձել օրվա հացի վրա քար գցել»: Մինասյանի գնահատմամբ՝ քաղաքապետի կտրուկ քայլերը հակասահմանադրական են, որովհետեւ այդ կերպ խախտվում են սահմանադրության բազմաթիվ հոդվածներ, որոնցով պետությունը պարտավոր է հոգ տանել իր քաղաքացիների մասին:

«Բացի դրանից Կարեն Կարապետյանն իր այս քայլով մնացած քաղաքապետներին մեղադրում է անգործության մեջ»:

Մի քանի ժամ տեւած քննարկումն ըստ էության, ոչինչ չհանգեցրեց. քաղաքապետարանից հավաստիացրին. օրենքում փոփոխություններ չեն լինելու:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. Գ. Այն պահին, երբ խորհրդարանում տեղի էր ունենում վերոնշյալ քննարկումը, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը բակում դիմավորում էր Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Միշելին Կալմի-Ռեյին: Նույն պահին ԱԺ շենքի դիմաց հավաքված մի քանի տասնյակ բացօթյա առեւտրով զբաղվողներ բողոքի ցույց էին կազմակերպել՝ պահանջելով իրենց չզրկել հանապազօրյա հաց վաստակելու իրավունքից:

# HTC Desire Z եւ HTC Desire HD սմարթֆոններ նոր՝ ավելի լավ գնով

Երեկվանից HTC Desire Z եւ Desire HD սմարթֆոններն Orange-ի խանութներում վաճառվում են նոր՝ ավելի հասանելի գնով: HTC Desire Z-ը նախկին 275.000 դրամի փոխարեն այսուհետեւ կարելի է գնել 239.000 դրամով, իսկ HTC Desire HD-ն 259.000 դրամով, նախկին 299.000 դրամի փոխարեն:

Երկու սմարթֆոններն էլ վաճառվում են հատուկ մշակված սակագնային պլանների հետ, որոնք ներառում են ամսական մինչեւ 700 ՄԲ ինտերնետի փաթեթներ 12 ամսվա ընթացքում, ինչը հնարավորություն կտա բաժանորդներին խնայել 120,000-ից մինչեւ 336,000 դրամ մեկ տարվա ընթացքում՝ կախված սակագնային պլանից: Այս առաջարկը թույլ է տալիս բաժանորդներին լավագույնս վայելել այս ֆանտաստիկ սարքերի հնարավորությունները:

Ինչպես մյուս բոլոր հեռախոսները, այնպես էլ HTC-ի այս երկու մոդելները վաճառվում են 1 տարվա երաշխիքով եւ հետվաճառքային սպասարկմամբ: Ավելին, հատուկ վերապատրաստված տեխնիկական մասնագետների կողմից Orange-ի վաճառքի կետերում բաժանորդներին տրամադրվում է Android օպերացիոն համակարգի հիմնական ֆունկցիաների վերաբերյալ նախնական անվճար խորհրդատվություն:

ԱՅԺ

# Չեզոք եւ անկողմնակալ Շվեյցարիան կարեւորում է Երեւանի հետ ակտիվ գործակցությունը

*1-ին էջից*

### Թուրքիա եւ Լեռնային Ղարաբաղ

«Անշուշտ դեռ երկար ճանապարհ կա անցնելու, բայց ես կարծում եմ, որ այն քաղաքական արիությունը, որը կողմերը ցուցաբերեցին Ցյուրիխում՝ արձանագրությունները ստորագրելով, հույս է տալիս, որ մենք կտեսնենք արդյունք: Շվեյցարիայի միջնորդական առաքելությունը ավարտվեց հենց արձանագրությունները ստորագրելով, սակայն այժմ էլ մենք ուշադրությամբ հետեւում ենք Հայաստան-Թուրքիա հարաբերություններին եւ հույս հայտնում, որ ակնկալվող արդյունքները ձեռք կբերվեն», Շվեյցարիայի նախագահի այս դիտարկմանը ՀՀ նախագահը հավելեց. «Հատուկ երախտիքի խոսքս ուղղում եմ տիկին նախագահին՝ Շվեյցարիայի իշխանություններին եւ անձամբ իր անգնահատելի միջնորդական առաքելության եւ ներդրած ջանքերի համար: Ափսոսանքով նշեմ, որ Թուրքիան խուսափում է իր ստանձնած պարտավորությունների կատարումից եւ նման գործելաոճով արժեզրկում թե՛ մեր նախաձեռնությունը, թե՛ գործընթացում ներգրավված կողմերի ջանքերը»:

Նախագահ Սարգսյանը տեղեկացրեց, որ ինքը իր շվեյցարացի գործընկերոջն է ներկայացրել Արցախի խնդրի կարգավորման վերջին զարգացումները, այդ թվում՝ Սոչիի վերջին եռակողմ հանդիպման արդյունքները. «Ուզում եմ հավաստել, որ այս անգամ Ադրբեջանի իշխանությունները կլինեն հետեւողական եւ իրենց խոսքն ու գործը կհամապատասխանեն իրար: Վերահաստատում ենք մեր դիրքորոշումը, որն է՝ ԼՂ ժողովրդի ինքնորոշման միջազգայնորեն ճանաչված իրավունքի խաղաղ իրագործման հնարավորությունն ապահովող լուծում, որին պետք է հասնել բանակցությունների միջոցով»: Քալմի-Ռեյը «ղարաբաղյան թեմայով» թերեւս որոշել էր պահպանել իր երկրի «չեզոքությունն ու անկողմնակալությունը առավել մեծ չափաբաժնով»:

Երբ երկու նախագահներին հարց ուղղվեց, թե ինչպե՞ս կորակեն Ադրբեջանի պետական ավիացիայի պետի հայտնի հայտարարությունը, թե Բաքուն կոչնչացնի Երեւանից Ստեփանակերտ թռչող քաղաքացիական ինքնաթիռները, տիկին նախագահը պատասխանեց. «Մեր երկիրը ԵԱՀԿ Մինսկի խմբի ակտիվ անդամ չէ: Ես օրեր առաջ Բաքվում էի, հանդիպեցի նախագահ Ալիեւին, եւ այժմ՝ նախագահ Սարգսյանի հետ հանդիպման ընթացքում ես նշեցի այդ հանդիպման մասին»: Հայաստանի նախագահը իր պատասխանում շատ ավելի կոնկրետ էր. «Կասկած չկա այն հարցում, որ ԼՂ բնակչությունն իրավունք ունի օգտվելու նաեւ օդային տրանսպորտից: Կասկած չկա նաեւ այն հացում, որ այս հարցը պետք է համաձայնեցնել միջազգային պատկան կազմակերպությունների հետ: Պետք է նկատել, որ նմանատիպ հայտարարություններ ժամանակակից պատմության մեջ հանդիպում են, բայց բացառապես ահաբեկչական կազմակերպությունների կողմից, այլ ոչ երբեք պետության»: Ընդհանուր առմամբ մեկ բառով՝ «մառազմ» որակելով Բաքվից հնչած հայտարարությունը՝ Սերժ Սարգսյանը շեշտեց. «Ես ուզում եմ ասել, որ ինքս եմ լինելու Երեւան-Ստեփանակերտ չվերթի առաջին ուղեւորը: Այո՛, Հայաստանի նախագահը: Կարծում եմ Շվեյցարիայի Համադաշնությունը համակարծիք կլինի այս հացում մեզ հետ», դիմելով Քալմի-Ռեյին՝ ասաց ՀՀ նախագահը: Շվեյցարիայի նախագահի պատասխանն արդեն ներկայացրինք, իսկ թե որքանով է Քալմի-Ռեյը համակարծիք այս հարցում Հայաստանի հետ, թերեւս եզրակացություններ անենք միայն նրա ժպիտից:

### «Ժամանակին ես անձամբ խնդրել եմ նախագահ Օբամային՝ արտասանել այդ բառը»

Այսպես պատասխանեց ՀՀ նախագահը հարցին՝ թե ի՞նչ ակնկալիքներ ունի Երեւանը ԱՄՆ նախագահ Օբամայի հերթական ապրիլքսանչորսյան ուղերձում «ցեղասպանություն» բառը օգտագործելու կապակցությամբ: «Ցանկությունն ու իրականությունը տարբեր բաներ են: Ամենալավն այն է, երբ դրանք համընկնում են, սակայն եթե նույնիսկ ԱՄՆ նախագահը չարտասանի այդ բառը, մենք չպետք է վհատվենք: Ես ինքս ժամանակին, խնդրել եմ նրան



օգտագործել հենց այդ բառը», ասաց Սերժ Սարգսյանը: Ինչպես ԼՂ հարցի կապակցությամբ, այնպես էլ Հայոց ցեղասպանության, Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ակտիվ միջնորդ Շվեյցարիայի նախագահը պահպանեց իր երկրի «չեզոքությունն ու անկողմնակալությունը»:

### Հայ-շվեյցարական հարաբերությունների նոր որակ

Շվեյցարիայի նախագահի այցը Երեւան՝ նշանավորվեց նաեւ մեր երկրում այդ երկրի դեսպանատան բացմամբ: Նորանշանակ դեսպան Կոնստանտին Օբոլենսկին դեսպանատան բացումը որակեց «երկկողմ գերազանց հարաբերությունների» վկայություն:

Միշելի Քալմի-Ռեյը Երեւանում երեկ հանդիպումներ է ունեցել նաեւ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հետ: Այսօր Շվեյցարիայի նախագահը կայցելի Գյումրի, որտեղ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համագործակցության շրջանակներում, իր խոսքերով՝ կծանոթանա, թե «ի՞նչ աշխատանքներ են կատարել շվեյցարացիները Գյումրիում՝ այս ոլորտում. «Շվեյցարիան Հայաստանի հետ սկսել է համագործակցել բնական աղետների, մասնավորապես, երկրաշարժերի կանխարգելման հարցում՝ սկսած ձեզ պատուհասած աղետից՝ 1988-ի երկրաշարժից», ասաց Միշելին Քալմի-Ռեյը:

ըՄեն անգամ, որ արտասանում ենք «հայերս մենք ենք մեր վատագույն թշնամիները» տհաճ ասույթը, մի նոր իրադարձություն գալիս է հաստատելու այս անդուր նախադասությունը: Կարծես հերիք չէ հայկական մաֆիայի վերաբերյալ տարածված լուրերի պատճառած անհանգստությունը, հիմա էլ մեկ ուրիշ հասարակական սկանդալ է հասունանում, որն ուղիղ հարվածում է ոչ միայն մեր հեղինակությանը որպես անհատների, այլեւ մեր համընդհանուր շահերին:

Բավական երկար ժամանակ հասարակության «վատ տղերքն» ու «քավության նոխազները» քաղաքական կուսակցություններն էին, որոնք իբր ներքին խլրտումներ եւ թշնամանք էին առաջացնում համայնքի ներսում:

բավական վտանգավոր մի վերապահությամբ առ այն, որ «Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամը իրավական տեսակետից պարտավորված չէ անշարժ գույքի իր բաժինը օգտագործել թանգարան կառուցելու համար»: Սա նշանակում է, որ պատմական կարեւորության շինության ճակատագիրը կախված է Գաֆեսճյան ընտանիքի քմահաճույքից: Ջերալդ Գաֆեսճյանը կարող է տնօրինել այն ինչպես ցանկանում է: Հույս ունենք, որ նա ճիշտ կկողմնորոշվի:

Մյուս կողմից՝ Ամերիկայի հայկական համագումարը պարզել է, որ «պրն Ջերալդ Գաֆեսճյանն ու պատվարժան դատավոր Կոլին Կոլլար-Կոտելին, ով վարում էր դատավարությունը, ծանոթներ են եղել... եւ այդ ծանոթությունն ու

«Նյու Յորք լայֆ» եւ «Աքսա» ապահովագրական ընկերությունների դեմ բացված դատական գործերի հաջող ելքը հույս էր ներշնչել, որ ի վերջո մասնակի արդարություն է կատարվում, եւ հետագայում ամերիկյան «դաշնային պահեստի» դռներն էլ կբացվեն, եւ հայերից Օսմանյան կառավարության խլած ոսկիները կվերադարձվեն իրենց իսկական տերերին:

Այս բոլորն անշուշտ նախնական քայլեր էին հետագայում Թուրքիայից վերջնական փոխհատուցում ստանալու ճանապարհին: Սակայն հենց այս սկզբնական շրջանում մենք արդեն իսկ խրվել ենք ճահճուտի մեջ, եւ փաստաբանները, որոնք հայ ժողովրդի համընդհանուր դատը պետք է պաշտպանեին, արդեն արատավորել են

# Կարիք չունենք թշնամիներ փնտրելու օտարների մեջ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

***Ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածը կարեւորագույն, այս պարագայում՝ ազգային տեսակետից ամոթալի հարցեր է շոշափում: Երկու դատ է այս օրերին ընթանում Սփյուռքում՝ Ջերալդ Գաֆեսճյանն ընդդեմ Հրայր Հովնանյանի եւ Մարկ Կիրակոսն ու Բրայան Կաբատեկն՝ ընդդեմ Վարդգես Եղիայանի: Ու ճիշտ է նկատում մեր հոդվածագիրը. երկար տասնամյակներ Սփյուռքի տարածքում, հատկապես անկուսակցականների շրջանակներում, կար տիրապետող կարծիք, թե ավանդական մեր կուսակցություններն են փոխադարձ պայքարի ու մրցակցության մեջ անհանգիստ ու խռովյալ պահում Սփյուռքը: Անկախությունից հետո սակայն, երբ անկուսակցական տարբեր կազմակերպությունների ու հարուստ անհատների դերը մեծացավ տարբեր գաղութներում, տարբեր բախումներ ու անտեղի մրցակցություններ առաջացան՝ անիշխանականության ու անհամագործակցության մթնոլորտը շեշտելով, նույնիսկ՝ ստեղծելո՛վ տարբեր գաղթօջախներում, ինչը վտանգավոր է ե՛ւ ազգային, ե՛ւ պետականության տեսակետից: Խնդիրը հասել է այնտեղ, որ որոշ անհատներ, ինչպես Նիցցայում եւ հավանաբար շուտով նաեւ Ժնեւում, ձեռնոց են նետում Մայր աթոռին անգամ զուտ եկեղեցական հարցերում: Վտանգավոր այս կացությունը առաջին հերթին պետք է մտահոգի մեր պետական իշխանություններին եւ ստիպի նրանց արագ արձագանքել դրանց:***

***ԽՄԲ.***

Այժմ ժամանակները փոխվել են, եւ նոր դերակատարումներ են հայտնվել բեմահարթակի վրա՝ ավելի վատ դրսեւորումներով: Օրինակներից մեկը Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության թանգարանի շուրջը ծավալված իրադարձությունն է: Համայնքը ոգեւորված էր, որ ազգի բնաջնջման ծրագրի գործադրումից եւ պատմական հայրենիքի կորստից մեկ դար հետո ինչ-որ չափով փոխհատուցվելու էր 1,5 միլիոն զոհերի հիշատակը: Մի քանի առատաձեռն բարերարներ մտահղացել էին արտակարգ մեծ նվիրատվությունների միջոցով Վաշինգտոնում՝ Սպիտակ տնից մի քանի քայլ հեռավորության վրա կառուցել Հայոց ցեղասպանության մի թանգարան: Հավատում էինք, որ այդ երազանքը իրականություն կդառնա: Հայերս, վերջապես համախմբվելով, այս երկրի մայրաքաղաքի կենտրոնական մասում կանգնեցնելու էինք պերճախոս մի շինություն՝ ի հեճուկս թուրքերի, որոնք շարունակում են ժխտել 20-րդ դարի ամենադժոխային արարքը:

Բայց նախնական ոգեւորությանը եկավ փոխարինելու մռայլ ու ահազդու լռությունը, որին հետեւեցին փոխադարձ մեղադրանքներն ու դատական հայցերը Հայկական համագումարի եւ Ջերալդ Գաֆեսճյանի միջեւ:

Երազանքը խամրեց, բայց մեղադրանքները շարունակվեցին ուշադրության արժանանալ տարաբնույթ մամուլի էջերում, ապացուցելով, որ փողն ու շրջահայացությունը միշտ չէ, որ համերաշխորեն զուգորդվում են: Ներկայումս թանգարանի ծրագիրը մոռացության է մատնվել, եւ միայն իրար դեմ պայքարող երկու կողմերի եսասիրությունն է հաղթականորեն առաջ շարժվում:

Ձմռան վերջերին դատավոր Կոլլար-Կոտելին պաշտպանել է Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամի իրավունքը՝ հետ ստանալու թանգարանային համալիրի համար ձեռք բերված անշարժ գույքի գումարը

նրանց համընդհանուր շահերը կարող են բացատրել, թե ինչու անվիճելի փաստերն անտեսելով դատավճիռը կայացվել է հօգուտ Գաֆեսճյանի»: Ներկայումս նոր դատական հայց է առաջ քաշվել, որը խոստանում է լինել առավել անաչառ եւ արդյունավետ, բայց նաեւ հավելյալ դատական ծախսեր, մսխումներ:

Եթե անտեսենք դատական պրոցեսում կողմերի ամբարտավանությունը, մեր առաջ կհառնի դավադրության տեսությունը: Ինչ-որ մեկը ինչ-որ տեղ դավում է ոչնչացնել մի ամբողջ ծրագիր, որի նպատակն է Վաշինգտոնի կենտրոնում բարձրաձայնել արդարության ժխտման դեմ: Թուրքերը երեւի շատ երջանիկ են այս իրավիճակով: Եղեռնի հարյուրամյակը սարերի հետեւում չէ, իսկ դատական այս քաշքշուկի ավարտը չի երեւում դեռ: Արդարացի լինելու համար նշենք, որ կին դատավոր Կոլլար-Կոտելին իր 190-էջանոց վճռի վերջում նշել է. «Թողեք վեճ-վիճաբանությունը եւ թանգարանը կառուցեք»: Հայն ավելի ճիշտ չէր կարող արձագանքել:

Բայց սրանով մեր մտահոգությունները չեն սահմանափակվում:

Ներկայումս ընթացքի մեջ է մեկ ուրիշ դատական հայց, որի մասին լրատվություն արդեն տպագրվել է: Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների դրամական փոխհատուցման դատական գործով զբաղվող երկու փաստաբաններ՝ Մարկ Կիրակոսն ու Բրայան Կատաբեկը «անպարկեշտ միջոցներով ստացված գումարները յուրացնելու» մեղադրանքով մարտի 11-ին դատական հայց են ներկայացրել ընդդեմ իրենց երրորդ գործընկերոջ՝ փաստաբան Եղիայանի եւ Ռիտա Մանդեսյանի: Մեկ միլիոն դոլարի այդ գումարը, ըստ նախնական որոշման, պետք է տրամադրվեր հայկական համայնքային կազմակերպություններին: Պրն Եղիայանը հերքել է իր դեմ եղած մեղադրանքները:

իրենց հեղինակությունը: Ինչպե՞ս կարող ենք հետապնդել մեր պահանջները Թուրքիայից, երբ սեւ ամպեր են կուտակվել պահանջատերերի ներկայացուցիչների գլխավերեւում:

Այս փուլում կարեւոր չէ, թե ով կշահի դատը, որովհետեւ վերջին հաշվով շահողը, հաղթանակողը Թուրքիան է, որ կարող է մեզ ծաղրի առարկա դարձնել՝ շահարկելով վերոնշյալ սկանդալային գործը:

Այս առթիվ ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդի հրապարակած հաղորդագրության մեջ հեգնանքի արժանի մի նախադասություն կա, որտեղ ասված է, թե կողմերին դիմելով պահանջում են անհապաղ եւ ինքնակամ հուսկ մասնագիտական հաշվետվություն ներկայացնել անկախ աուդիտորական մի հանձնաժողովի, քանի որ ի սկզբանե գործընթացը պետք է որ թափանցիկ լիներ:

Առաջին հայացքից ճիշտ եւ արդարացի մի պահանջ. բոլորն էլ պետք է պատասխանատվության ենթարկվեն: Սակայն ՀՅԴ-ն, որն ամենաքիչ թափանցիկ կազմակերպությունն է, պետք է վերջինը լիներ նման պահանջ ներկայացնելու համար: Չէ՞ որ այդ կազմակերպությունը դեռ ոչ մի հաշվետվություն չի ներկայացրել 1988-ի երկրաշարժի կապակցությամբ իր հավաքած գումարների վերաբերյալ:

Վերոնշյալ դատական հայցերն օրինակներ են, թե ինչպես կարող են հայերն իրենց արարքներով վնասել իրենք իրենց: Երեւի իրենց 126-ամյա պատմությամբ մեր կուսակցությունները, թեկուզ իրենց ներկուսակցական պայքարով, այնքան չէին արատավորել մեր համընդհանուր շահերը, որքան այս դատական հայցերը: Այստեղ են ասել՝ մենք մեր մեջ բավականաչափ թշնամիներ ունենք եւ բոլորովին կարիք չունենք օտարների մեջ փնտրելու նրանց:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Հ.Ծ.**

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՄԱՆԸ

# Հայ անունը՝ պատիվը մեր...

Ասել ասելու համար: Այսինքն՝ միտք շարժես անբովանդակ ու անիմաստ: Եվ վերջում նույնիսկ չգիտակցես, որ զբաղվել ես անօգուտ, չգիտակցես, որ այդպիսով գերազգային հիմնախնդրի քննարկումը վերածել ես անպտուղ խոսակցության: Գրեթե նմանօրինակ գործելակերպի ականատես եղա՝ ունկնդրելով «Երկիր Մեդիայի» լրագրող Վարդան Օհանյանի՝ մարդկանց անուններին նվիրված հարցազրույցը:

Հաղորդմանը մասնակցում էին բանասեր Ռուբեն Նահատակյանը, արեւելագետ Լիա Ավետիսյանը, ակտերի գրանցման ծառայության աշխատակցուհի Հասմիկ Հարությունյանը եւ պատմաբան Անժելա Տերյանը:

Օտարահունչ, ականջ ծակող ոչ հայկական անուն-ազգանունները հեռուստադիտողների դատին ներկայացնելու եւ ճիշտ համարժեքներով փոխարինելու համար արդյունավետ խոսակցություն բացելու առումով մասնակիցները կարող եւ սրտացավ մարդիկ էին: Եվ նախատեսված էր հայկական անուն-ազգանունները մեկնաբանել գիտական ժամանակակից գաղափարախոսության լույսի ներքո, ըստ որի, իրենց բնօրրան դիտվող Հայաստանից արիական ազգերը սփռվելով աշխարհով մեկ՝ տարածել են հայկական արժեքները, այդ թվում՝ անուն-ազգանունները: Դրանք այն ազգապահպան գործիքներն են, որոնք կրելը կերազեին վրաց եւ թուրք ազգերը:

Ցավոք, ելակետային այս տվյալները մի տեսակ կտրվեցին հարցազրույցից, քանզի հարցազրույց վարողն անուն-ազգանունները ներկայացնում էր հախուռն, ոչ համակարգված: Այս բացը վերացնելու փոխարեն լրագրողը ստեպ-ստեպ ընդհատում էր զրուցակիցներին՝ տեղի-անտեղի բերելով այլեւայլ օրինակներ: Փոխարենը կարող էր աջակցել Լ. Ավետիսյանին, որպեսզի քաջատեղյակ լեզվաբանն աներ ծավալուն փաստարկներ անուն-ազգանունների վերաբերյալ: Բանասեր Ռուբեն Նահատակյանը հարկադրված տեղեկացրեց, որ Ավետիսյանն ունի լեզվաբանական վերլուծության գործունեության լուրջ պատրաստականություն: Նա այն վաստակաշատ մասնագետն է, ում՝ հայկական արժեքների վերաբերյալ ռուսագիր ստեղծագործություններն այնքա՜ն հայտնի են ԱՊՀ-ի երկրների ընթերցողներին: Բայց ապարդյուն...

Լ. Ավետիսյանն էլ պիտի համարձակ ավելացնի, որ Դավիթը հայկական անուն է, ոչ թե հրեական: Ավելին, նա շրջանցելով հայագիտությունում առկա արդի կարծրատիպը՝ ասաց, որ Դավթի կազմությունն օրինաչափ է հայերենին իսկ իթ-ը պարզապես վերջածանց է: Նոր լույսի ներքո ստուգաբանեց նաեւ Ալեքսանդր, Ռոման, Իզաբելլա անունները:

Սակայն Օհանյանը չգիտես ինչու չանդրադարձավ, որ բանասերն ու հրապարակախոսը ի սկզբանե հակված էին մեր անուն-ազգանունները հնչեցնել համեմատական լեզվաբանության ելակետից, մի լուրջ պահանջ, որը ոչ միայն ցանկալի է, այլեւ՝ պարտադիր: Այդ մասին ակնարկեց եւ փաստարկեց Նահատակյանը: Սակայն, ինչպես ասում են, ասողին լսող է պետք:

Թրքաբանությունները եւ սեմաբանությունները դարերով ժանգի պես ներծծվել են հայերենի բառամթերքի մեջ՝ վերջինիս մեջ սպանելով մեր ոգեղեն փայլը, նսեմացնելով մեր հոգեբանական գեղեցկությունները: Ուստի եւ մասնակիցների խոսակցությունից չվրիպեց Կարագյոզյան ազգանունը, ինչպես նաեւ այն բազմաթիվ չփլաղյանները, կարախանյանները, ղավալյանները, բեկ-ով եւ օղլի-ով կազմված այն մի քանի հարյուրների հասնող թուրք-թաթարական ծագմամբ անունները:

Բայց ահա հարցազրույցի մասնակիցներն սկսեցին տատանվել, երբ խոսակցություն ծավալվեց թուրքական ծագմամբ անուն-ազգանունների հետագա գործածության վերաբերյալ: «Հարկավ, հարկավ պիտի պահպանել թուրքական արմատներով ազգանունները: Հայացնելու պատճառով կխաթարվեն հայկական տոհմային հարաբերությունները», պնդեցին մասնակիցներից շատերը: Ընդդիմացավ միայն պատմաբան Անժելա Տերյանը: Իսկ ճնշող կողմին պաշտպանելուն, ասես, փողոցի անցորդների անհիմն կարծիքներն էին պակասում՝ պնդելով, որ թուրքական ազգանունները հարկ է պահպանել: Ահա այստեղ էլ լրագրողը չեղավ իր բարձրության վրա: Դա նկատվեց մասնավորաբար քաղաքացիական ակտերի ծառայության աշխատակցուհի Հասմիկ Հարությունյանի արտահայտման առիթով:

- Այդպես են ուզում մեր քաղաքացիները,- ասաց նա: Մենք չենք կարող ընդդիմանալ նրանց: Դա նրանց կամքն է:

Իսկ թե ինչքանով են գիտակցում նույն քաղաքացիները՝ ոչ մեկին չի հուզում, առավել եւս՝ իրավապահ մարմնի աշխատակցուհուն: Նրա համար ոչինչ, որ տուժում է հայ մարդկանց ազգային ինքնասիրությունը: Կարեւորն, ըստ նրա, թուրքական արմատով ազգանուն կրողը հանցագործ չէ... Սակայն գոնե նման կեցվածք չպիտի ցուցաբերի ազգայնական կուսակցության լրագրողը: Պրն Օհանյանը տեղյա՞կ է, որ բազում մեր հայրենակիցներ ամոթի եւ վիրավորանքի խոր զգացումով կրում են Չփլաղյան, Կարախանյան, Դադաշյան, Բալաբեկյան, Ալավերդյան, Լալաբեկյան, Ջանիբեկյան եւ այլ ազգանունները, որոնց թիվը կազմում է հայկական ազգանունների կեսից ավելին:

Հարցը տեղաշարժելուն կրկին տոն տվողը եղավ Ռ. Նահատակյանը՝ շեշտելով, որ պետական նախաձեռնությամբ էվոլյուցիոն ճանապարհով պետք է փուլ առ փուլ ձերբազատվել թուրքական ծագումով անուններից:

Պրն Օհանյանը անտեղյակության իր զենիթին հասավ հարցազրույցն ավարտվելուց առաջ՝ զարմանալիորեն բացականչելով. «Ադե՜, քիչ են հայկական անունները...»՝ այդպիսով մեր մայրենին դարձնելով իր քավության նոխազը: Մի՞թե... Հապա փոքր-ինչ հաղորդակցվեք հայագիտության գագաթների՝ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Պ. Ղափանցյանի, մյուս երախտավորների հետ: Կարճ եւ հետեւողական հաղորդակցություններն, անշուշտ, շատ կօգնեին Ձեզ՝ լրագրողիդ ներկայացնելու ճաշակով, ժամանակակից անունների մի շարան՝ Վիգեն, Վահե, Գոռ, Հայկ, Արա, Արամ, Գագիկ, Գարեգին, Մանե, Նարե, Լուսինե, Վաչե, Շուշան, Տիգրան, Գեղամ, մեկը մյուսից հոգեհարազատ եւ առինքնող:

Այնուհանդերձ, հարցազրույցի հազիվ նմանվող այս հաղորդումը թերություններ-թերացումների հետ մեկտեղ ունի երկու լուսավոր առավելություն: Հարց բարձրացվեց էվոլյուցիոն ճանապարհով բարեփոխելու հայկական անուն-ազգանունները եւ կազմելու անվանագիրք: Սակայն այս առաջարկները դժվար թե կյանքի ուղեգիր ստանան, քանի դեռ հրապարակի վրա չէ Հայաստանի լեզվական քաղաքականության հիմնական օրենքը, այն է՝ լեզվական քաղաքականության հայեցակարգը:

**ԱՐԱՄԱՅԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ**

# Խակության մանկական հիվանդությունը

Իլհամ Ալիեւի աշխատակազմի բաժնի վարիչ Ալի Հասանովը «մեկնաբանել է» Լիբիայի դեմ ռազմական գործողությունները: Հին, բարի ժամանակներում անեկդոտ կար. ուսանողը գիտի միայն լվի մասին, բայց քննության նրա հարցը ձկների վերաբերյալ է, եւ նա սկսում է. «Եթե ձուկն ապրեր ցամաքում, ապա նրա վրա լու կլիներ», եւ սահուն անցնում լվի նկարագրությանը:

Ներկայիս ադրբեջանական իշխանությունները հիշեցնում են այդ ուսանողին. ինչ էլ որ աշխարհում կատարվի, նրանք դա տեսնում են ղարաբաղյան խնդրի սեփական ընկալման կտրվածքով: Հասանովը բացառություն չէ: «Երբ ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից բանաձեւ է ընդունվում լիբիական բռնապետի դեմ, իսկույն էլ կատարվում է մեծ կամքով, այն դեպքում, երբ ՄԱԿ-ի ԱԽ-ի չորս բանաձեւերը, որ ընդունվել են տարբեր ժամանակներում՝ Հայաստանի վերաբերյալ, շուրջ 20 տարի չեն կատարվում», ասել է նա:

Հասանովի այլ բնութագրումներին անդրադառնալու հարկ չկա: Դրանք նույնքան «հիմնավոր» են, որքան մեջբերվածը: Եվ հենց դա էլ մտահոգիչ է: Ոչ թե այն առումով, որ նրա տեսակետը կարող է «ընդունելի դառնալ»: Ո՛չ: Պակաս մտահոգիչ չէ այն, թե ինչ մակարդակի երկրի հետ գործ ունեն հայկական կողմերն ու միջազգային հանրությունը:

Հատկապես վերջինիս մոտ, կարծում ենք, Հասանովի խակության մանկական հիվանդությունը պետք է որոշակի հարցերի տեղիք տա: Մասնավորապես, ինչպե՞ս կարող է պետական պաշտոնատար անձն իրեն թույլ տալ նենգափոխել ՄԱԿ-ի ԱԽ-ի ընդունած բանաձեւերի բովանդակությունը: Չէ՞ որ ղարաբաղյան խնդրով ՄԱԿ-ի ԱԽ-ն «Հայաստանին վերաբերող» եւ ոչ մի բանաձեւ չի ընդունել: Չէ՞ որ այդ բանաձեւերում ակնարկ իսկ չկա կողմերից որեւէ մեկի նկատմամբ ուժ կիրառելու մասին: Չէ՞ որ այդ բանաձեւերով, ընդհակառակը, բոլոր կողմերին կոչ է արվում դադարեցնել մարտական գործողությունները եւ տարաձայնությունները հաղթահարելու համար բանակցություններ սկսել: Չէ՞ որ դրանք այլ հակամարտության բոլոր կողմերին հորդորում են զերծ մնալ ռազմական էսկալացիայից, իսկ այլ երկների՝ պարտավորեցնում զենք եւ զինամթերք չմատակարարել որեւէ կողմի:

Կատարվա՞ծ են այդ բանաձեւերի պահանջները: Մասամբ՝ այո. մարտական գործողությունները դադարեցված են, ԵԱՀԿ-ի ՄԽ-ի համանախագահության միջնորդությամբ սկսված եւ շարունակվում են բանակցությունները: Իսկ ահա ռազմական էսկալացիայից զերծ մնալու առումով՝ ոչ: Քանի որ Ադրբեջանն անցած բոլոր տարիներին եւ այսօր էլ նախապատրաստվում է ոչ թե արդարացի եւ արժանապատիվ, բոլոր կողմերին բավարարող խաղաղության, այլ՝ ռեւանշիստական պատերազմի:

Այս հարցում, այո՛, միջազգային հանրությունը՝ ի դեմս ՄԱԿ-ի, անելիք ունի: Եվ պարտավոր է զսպել ադրբեջանական ազգայնականության ռազմատենչությունը: Հակառակ դեպքում չի բացառվում, որ վաղը ծագի «կովկասյան Քադդաֆիի» դեմ պատժամիջոցներ կիրառելու անհրաժեշտություն:

Ի՞նչ տարբերություն, թե բռնապետն ով է: Եթե Քադդաֆին սպանել է իր երկրի այլախոհներին, ապա Իլհամ Ալիեւն սպառնում է զենքի ուժով հպատակեցնել ԼՂՀ ամբողջ բնակչությանը: Իսկ այդ դեպքում մարդասիրական ճգնաժամն անխուսափելի կդառնա: Քանի որ եթե Լիբիայի այլախոհները չեն ընդունում Քադդաֆիի իշխանության օրինականությունը, ապա ԼՂՀ հայ մեծամասնությունն էլ մերժում է իր հանդեպ ադրբեջանական իրավազորության օրինականությունը:

Լիբիայի դեպքում միջազգային համակրանքն այլախոհների կողմն է: Նույն տրամաբանությամբ, նա կոչված է պաշտպանելու ԼՂՀ հայ մեծամասնության կարծիքը: Իսկ Հասանովի խակության «մանկական հիվանդությունն» այն է, որ նա փորձում է փոխել շեշտադրումները եւ իր երկիրը ներկայացնել որպես «ագրեսիայի զոհ»:

Մինչդեռ միջազգային հանրությունը քաջատեղյակ է, թե ինչպես է զուտ իրավաքաղաքական խնդիրը վերաճել զինված հակամարտության, եւ ինչ պետք է արվի, որպեսզի աղետը չկրկնվի:

Ցավալի է, երբ Ադրբեջանում անցյալից դաս առնելու փոխարեն ձգտում են ամեն ինչ «վերադարձնել մեկնակետին»: Իսկ միջազգային հանրությունը գիտի, որ դրանով խնդիրը ոչ թե լուծվելու, այլ ավելի է սրվելու: Այլ բան, եթե ժամանակին, երբ ադրբեջանական իշխանությունները, օգտագործելով խորհրդային բանակի եւ պատժիչ մարմինների հնարավորությունները, իրականացնում էին Լեռնային Ղարաբաղը էթնիկ մաքրագործման ենթարկելու «Կոլցո» ռազմագործողությունը, ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդուներ բռնությունները դադարեցնելու կամ հակառակ դեպքում բռնացողներին պատժելու մասին բանաձեւ:

Բայց այն ժամանակ դա անհնար էր: Քանի որ ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ երկիրը՝ Խորհրդային Միությունն էր արտոնել այդ գործողությունները: Բայց մի՞թե դրանից ինչ-որ բան փոխվում է: Միեւնույնն է, աշխարհը գիտի, որ պատերազմ սկսել է Ադրբեջանը: Եվ նա դարձել է սեփական արկածախնդրության պատանդը, եթե այսօր էլ շարունակում է երազել, որ խնդրի լուծումը «ուժի կիրառման հարթությունում» է:

Սա վտանգավոր հիվանդություն է, որից ադրբեջանական իշխանությունը կամավոր չի ցանկանում բուժվել: Այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, պետք է ընտրվի «հարկադիր բուժման» տարբերակը, որ այն է, ինչ կիրառվում է Լիբիայում:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Հակակառավարական հաջորդ ցույցը Բաքվում կկազմակերպվի ապրիլի 2-ին

*Ընդդիմությունը պատրաստվում է ցույցերը տարածել Ադրբեջանի շրջաններում*

Մարտի 16-ի համարում «**Ազգը**», անդրադառնալով Ադրբեջանի ներքաղաքական զարգացումներին, նշել էր, որ մարտի 11-12-ին ադրբեջանական իշխանությունները Բաքվում կանխեցին շրջաններում ընթացող հակակառավարական ցույցերի վերածումը համաժողովրդական խռովության:

Խոսքը մարտի 11-ը երկրում «Ժողովրդական մեծ ցասումի օր» նշանակվելու նախաձեռնության մասին էր: Դրանով հանդես էին եկել ադրբեջանցի երիտասարդները, իսկ Ադրբեջանի Ժողովրդական ճակատ կուսակցությունը պաշտպանել էր նախաձեռնությունը:

Թեեւ իշխանությունները ոստիկանական արտակարգ միջոցառումներով կանխել էին մարտի 11-12-ի հակակառավարական ցույցերի վերածումը համընդհանուր խռովության, սակայն մինչ այդ ցույցերին ընդամենը բարոյական ու քաղաքական աջակցություն ցուցաբերող ադրբեջանական ընդդիմության ձեւավորած այլընտրանքային խորհրդարանը դրանց անմիջականորեն մասնակցելու պատրաստակամություն էր հայտնել:

Ավելին, խորհրդարանի գործադիր կոմիտեի մարտի 14-ի նիստում մասնակիցները հանդես էին եկել ապրիլի 26-ին Բաքվում հակակառավարական համատեղ ցույց կազմակերպելու առաջարկով: Ինչպես երեւում է, կոմիտեի առաջարկը վերանայվել է, որ այլընտրանքային խորհրդարանի մարտի 30-ի նիստում համատեղ ցույցի օր է նշանակվել ապրիլի 2-ը: Տեղեկացնելով այդ մասին, թուրքական «Դունիա Բուլթենի» կայքէջը նշում է, որ այդ նիստը գումարվել է Ադրբեջանի ժողովրդական կուսակցության կենտրոնական վարչության շենքում, որին մասնակցել են ընդդիմադիր 300 ներկայացուցիչներ:

Այլընտրանքային խորհրդարանի մարտի 30-ի նիստում նախքան ապրիլի 2-ը բողոքի համատեղ ցույցի օր նշանակելը ելույթ է ունեցել «Մուսաֆաթ» կուսակցության նախագահ Իսա Ղամբարը: Նա, դիմելով իշխանություններին, աշխարհում ընթացող քաղաքական զարգացումները ճիշտ գնահատելու կոչ է արել: Ադրբեջանի Ժող. ճակատ կուսակցության նախագահ Ալի Քերիմլին ասել է, որ Ադրբեջանում ցույցերի ալիքը կտարածվի մինչեւ ընդդիմության պահանջների կատարումը, որոնք են.

1. երկրում անցկացնել քաղաքական, սոցիալական եւ տնտեսական բարեփոխումներ, նշանակել խորհրդարանական վաղաժամկետ ընտրություններ, մշակել նոր սահմանադրություն եւ վերանայել ընտրությունների մասին օրենքը,
2. վերջ տալ կոռուպցիային եւ այդ նպատակով լուծարել նախարարների խորհուրդը,
3. նավթից եւ ազգային այլ հարստություններից ստացվող եկամուտներից հավասարապես բաժին հանել ժողովրդին,
4. ազատ արձակել քաղ. բանտարկյալներին:

Մինչ այլընտրանքային խորհրդարանը պահանջ էր ներկայացնում Իլհամ Ալիեւի վարչակարգին, հակակառավարական ելույթները, ըստ թուրքական կայքէջի, շարունակվել են Ադրբեջանի տարբեր քաղաքներում եւ շրջաններում: Սաբիրաբադում բնակիչները բողոքել են սոցիալական անարդարությունների դեմ, Աստարայում փակել են կենտրոնական պողոտան, Կիրովաբադում հանդես են եկել նորանշանակ մարզպետ Էլմար Վելիեւի դեմ, Սումգայիթում մարզպետ Էլդար Ազիզովը բախվել է բնակչության հակազդեցությանը, սոցիալական պայմանների վատթարացմանը շարունակում են ընդվզել նաեւ Բաքվի շրջաններում:

Այդ ընթացքում ընդդիմությունը հայտարարում է, որ ապրիլի 2-ին բողոքի ցույցեր է կազմակերպելու նաեւ Ադրբեջանի շրջաններում:

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

ԱՏՈՄԱՅԻՆ ԱՂԵՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

# Ճապոնիայի վարչապետը կփակի «Ֆուկուշիմա-1»-ը



**Ճապոնիայի վարչապետ Նաոտո Կանը կարծում է, որ «Ֆուկուշիմա-1» ատոմակայանը պետք է փակվի, քանի որ վթարներն ու ճառագայթումը շարունակվում են: ԱԷԿ-ը փակելու անհրաժեշտության մասին վարչապետը հայտարարել է Ճապոնիայի կոմկուսի ղեկավարության հետ հանդիպման ժամանակ, նշում է Կիոդո գործակալությունը:**

**Ավելի վաղ ԱԷԿ-ի շուտափույթ փակման անհրաժեշտության հարցն արծարծել էր կառավարության գլխավոր քարտուղար Յուկիո Էդանոն: Սակայն որեւէ պաշտոնական որոշում առայժմ չի ընդունվել:**

**Ատոմակայանում խնդիրներ ծագեցին մարտի 11-ի սաստիկ երկրաշարժից եւ ցունամիից հետո: Էլեկտրամատակարարման խափանման հետեւանքով շարքից դուրս եկավ ռեակտորների հովացման համակարգը: Տեղի ունեցան պայթյուններ, ուղեկցվելով ռադիոակտիվ նյութերի արտահոսքերով:**

**Ճապոնիայի արտակարգ ծառայությունների վերջին գնահատումների համաձայն, ԱԷԿ-ի մոտակայքում՝ ծովի ջրում ռադիոակտիվ յոդի պարունակությունը նորման գերազանցում է 4385 անգամ: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ դա վթարների սկզբից մինչեւ օրս արձանագրված ռադիոակտիվության ամենաբարձր ցուցանիշն է:**

**Վթարների պատճառով խիստ քննադատության է ենթարկվել «Ֆուկուշիմա-1»-ի օպերատոր TEPCO ընկերությունը: Պարզվել է, որ էներգետիկներին զգուշացրել էին վթարների վտանգի մասին, բայց որեւէ միջոց չէր ձեռնարկվել: Բացի դրանից, TEPCO-ն քանիցս մերկացվել է ԱԷԿ-ի սպասարկման կարգի խախտումների մեջ:**

**Վթարների կապակցությամբ Ճապոնիան որոշել է խստացնել պահանջկոտությունը միջուկային օբյեկտների անվտանգության նկատմամբ: Հայտարարվել է, որ կասեցվելու է նոր միջուկային օբյեկտների շինարարությունը:**

# Լիբիայի արտգործնախարարը փախել է Լոնդոն

*ԱՄՆ-ը գաղտնի գործողություն է սկսել այդ երկրում*

**Լիբիայի արտգործնախարար Մուսա Քուսան մարտի 30-ին Թունիսից թռել է Լոնդոն եւ Մեծ Բրիտանիայի խորհրդարանում հայտարարել է, որ ինքը թողել է պաշտոնը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ն երեկ հաստատել է այս լուրը, ընդգծելով, որ նախարարը գործել է «սեփական կամքով»:**

**Մուսա Քուսան Թունիս էր մեկնել «մասնավոր այցով» եւ այդ երկրում մնացել էր երկու օր: Մեծ Բրիտանիայում տարածված հայտարարության մեջ Քուսան բնորոշվում է որպես Մուամմար Քադդաֆիի կառավարության կարեւոր դեմքերից մեկը, որն «այլեւս չի ուզում» Լիբիան ներկայացնել միջազգային ասպարեզում:**

**«Ալ Ջազիրա» հեռուստաալիքը հաղորդում է, որ Թունիսի կառավարությունը սառեցրել է Քադդաֆիի բոլոր ակտիվները (հյուրանոցներ, բենզալցակայաններ, Թունիսում գտնվող նավթապահեստ):**

**Մուսա Քուսան Լիբիայի արտգործնախարարի պաշտոնն զբաղեցնում էր 2009-ի մարտից: Դրանից առաջ նա 15 տարի գլխավորում էր Լիբիայի հետախուզությունը եւ համարվում էր երկրի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը:**

**Ինչ վերաբերում է բուն Լիբիայի իրադարձություններին, երեկ «Ազգը» գրել էր Քադդաֆիին հավատարիմ մնացած կառավարական զորքերի հակահարձակման մասին: Անցած մեկ օրում իրավիճակը գրեթե չի փոխվել: Կառավարական զորքերը ապստամբներից հետ են գրավել Ռաս-Լանուֆ, Սերտ, Բին-Ջավադ քաղաքները, շրջապատել են Միսրատա քաղաքը: Ապստամբները օգնության խնդրանքով կրկին դիմել են Արեւմուտքի երկրներին: «Մենք ստիպված ենք նահանջել, որպեսզի փրկենք մեր զինվորներին: Կոալիցիայի ուժերը պետք է անհապաղ միջամտեն», երեկ հայտարարել է Լիբիայի Անցումային ազգային խորհրդի ներկայացուցիչ Իման Բուգայգին:**

**Ընդդիմության ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Սուլեյման Մահմուդը իր հերթին հայտարարել է, որ ապստամբներին օգնություն է հարկավոր: Նրա կարծիքով, կոալիցիան պետք է հարվածի անմիջականորեն Մուամմար Քադդաֆիին: Ըստ գեներալի, օգնություն ստանալու դեպքում ապստամբները Քադդաֆիին կարող են հաղթել երկու շաբաթվա ընթացքում, մինչդեռ առանց օգնության մարտերը կտեւեն 6 ամիս:**

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման թույլատրել է ԿՀՎ գաղտնի գործողությունների անցկացումը Լիբիայում: Այդ մասին Ռոյթեր գործակալությանը հայտնել են ԱՄՆ կառավարության պաշտոնական ներկայացուցիչները:**

**Վերջիններս չեն պնդում, թե ԿՀՎ նպատակներից մեկը Քադդաֆիին սպանելն է, սակայն դա չեն էլ բացառում: «Ամերիկայի ձայնի» թղթակից, հատուկ ծառայությունների աշխատանքի փորձագետ Գերի Թոմասը նշում է, որ «գաղտնի գործողությունները» ներառում են տարբեր խնդիրներ, այդ թվում՝ քարոզչություն, գաղտնի ֆինանսավորում, ընտրակեղծիքներ, ապստամբների զինում ու վարժեցում եւ նույնիսկ պետական հեղաշրջման հրահրում:**

**Որոշ տեղեկությունների համաձայն, գործողությունն արդեն սկսվել է: Ամերիկացի պաշտոնաթող գնդապետ Դեւիդ Հանտը եւ հետախուզության փոխգնդապետ Թոնի Շեֆերը դեռ մարտի 25-ին այդ մասին հայտարարել էին Fox News-ի եթերում: Հանտի խոսքերով, Պենտագոնը Լիբիայում օդուժի ծավալուն գրոհներ չէր ձեռնարկի, եթե այդ երկրի տարածքում մարդիկ չունենար:**

**Ըստ Հանտի, ԿՀՎ գործակալները Լիբիայում են արդեն 12 օր (այսինքն՝ մարտի 13-ից): Սա նշանակում է, որ կոալիցիոն ուժերի ռազմօդանավերի գրոհներն սկսվելուց առաջ Լիբիայում արդեն ամերիկացի գործակալներ են եղել:**

**Հանտը եւ Շեֆերը պնդում են, որ Լիբիայում ամերիկացի գործակալները հետեւում են կոալիցիոն զորքերի արձակած հրթիռների ուղղորդմանը:**

**«Նյու Յորք թայմս» թերթի տվյալներով, գաղտնի գործակալներին հանձնարարված է տեղեկություններ հավաքել հրթիռների ու ռումբերի հարվածների վերաբերյալ եւ կապ հաստատել ապստամբների հետ: Բրիտանացի պաշտոնյաներից ոմանք հավելում են, որ Լիբիայում գործում են նաեւ բրիտանական MI-6-ի տասնյակ գործակալներ, որոնք ուղղորդում են բրիտանական օդուժի ռմբահարվածները եւ տեղեկություններ հավաքում տանկային շարասյուների, հրետանու եւ հակաօդային պաշտպանության համակարգերի վերաբերյալ:**

ԺՆԵՎ

# Սարգիսը գրավել է Մամկոյի բոլոր սրահները

Ժնեւի ժամանակակից արվեստի Մամկո (Mamco) թանգարանը Սարգսին պատվում է «Hotel Sarkis» հետահայաց ցուցահանդեսով: «Նոյե ցյուրխեր ցայթունգի» մարտի 28-ի հիշյալ հրապարակումը, որ արտատպել էին տեղական տարբեր լրատուներ, վկայում է բացառիկ այս արվեստագետի «թարմ ու անսովոր» աշխարհընկալման հանդեպ հանրության մեծ հետաքրքրությամբ:

Ժամանակակից արվեստի Մամկո թանգարանը Շվեյցարիայի ամենաերիտասարդ թանգարանն է: Բացումից՝ 1994-ից ի վեր 950 ցուցահանդես է ներկայացվել այստեղ, որոնց թվում շատ նշանավոր արվեստագետների հետահայաց ցուցադրություն է հանրության ուշադրությանը հանձնվել:

Սարգիսը Մամկոյի՝ այսպես կոչված «բնակիչներից» է: Թանգարանի հիմնումից ի վեր նա այստեղ մի փայտաշեն խուց ունի, որ արվեստի գործ է եւ միաժամանակ նաեւ արվեստանոց, ուր ամեն տարի նոր ջրաներկ է ստեղծվում եւ պահպանվում: Բայց այս օրերին ոչ թե մեկ, այլ թանգարանի բոլոր սրահներն են նրանը, ավելի շուտ ոչ միայն նրանը, այլ ճամփորդական մի խմբի տնօրինության տակ, որ երգահաններ ու երաժիշտներ են, գրողներ ու փիլիսոփաներ, ճարտարապետներ ու կինոբեմադրիչներ, նկարիչներ ու քանդակագործներ, որ իր հետ միասին բնակվում են նույն փողոցի նույն տանիքի տակ: Պայծառ ու պատրանքային մի հանրություն, որին մաս են կազմում Յոհան Սեբաստիան Բախն ու Առնոլդ Շյոնբերգը, Ռիխարդ Վագներն ու Բերթոլդ Բրեխտը, Լե Կորբյուզեն ու Անդրեյ Տարկովսկին, Յոզեֆ Բոյսն ու Մաթթիաս Գրյունեվալդը: Սարգսի ինստալացիաների ուշագրավ մասը ինտերակտիվ երկխոսության մեջ է արվեստի բոլոր տեսակների ներկայացուցիչների հետ:




Կոնցեպտուալ արվեստի ներկայացուցիչ Սարգիսը (Սարգիս Զաբունյան) ծնվել է 1938 թվականի սեպտեմբերի 26-ին Պոլսում: 1955-ին շատ պատահական՝ Մունխի «Ճիչը» ստեղծագործության արտատպված մի օրինակ տեսնելուց հետո մսագործի որդին սկսեց նկարել, այնուհետեւ հաճախեց ծննդավայրի գեղարվեստի ակադեմիան: 1964-ին տիկնոջ՝ Իզիլ Աֆյունզիի հետ տեղափոխվում է Փարիզ: Նույնիսկ հիմա, երբ Բոյսի ազդեցությունը նրա ստեղծագործության վրա տիրապետող շեշտ ունի, «Ճիչը» ստվերի նման հետապնդում է Սարգսին, այնպես, ինչպես արեւելյան գորգերը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ռմբակոծությունների ժամանակ պատուհանի ապակիները մթնեցնելու համար էին գործածվում: Ցուցահանդեսում այդպիսի 73-ամյա մի գորգ է ներկայացվում, որ շատ բան է տեսել, բայց լուռ է ու այցելուներից որեւէ մեկի մտքով չի էլ անցնում կոշիկներով հպվել նրան, խախտել լռությունը:

«Ma memoire est ma patrie» անունն էր կրում 1985-ին Բեռնի Քունստհալլեում բացված Սարգսի ցուցահանդեսը: Սարգսի համար արվեստը հիշողությունից է սերում, առաջին հերթին՝ զուտ կենսագրականը դուրս է մղվում, տեղը զիջելով բոլոր ձայներին, տեսածին, կարդացածին, որ ներառնելով կարող է տեր դառնալ մարդկության ողջ պատմությանն ու մշակույթին:

Նրա «Hotel Sarkis» ցուցահանդեսն ամփոփում է 200 ստեղծագործություն: Ինստալացիա, լուսանկար, ջրաներկ ու վիդեո: Սարգիսը կապում է նկարչությունն ու կինոն՝ Արեւմուտք-Արեւելքն ինտելեկտուալ ավանդույթներով:

Սարգսի «Hotel Sarkis» հետահայաց ցուցահանդեսը Մամկոյում կարելի է դիտել մինչեւ մայիսի 8-ը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ,
Գերմանիա

# «Արմմոնո»՝ ապրիլի 3-8-ը

«**Ազգն**» արդեն տեղեկացրել է «Արմմոնո» միջազգային 9-րդ փառատոնի մասին, որն անցկացվում է ՀՀ մշակույթի նախարարության եւ ՀԹԳՄ աջակցությամբ, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո: Երեկ, փառատոնի հիմնադիր, ՀԹԳՄ նախագահ Հակոբ Ղազանչյանը, փառատոնի նախագահ Մարիաննա Մխիթարյանը, մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սոնա Հարությունյանը, դերասաններ Սամվել Բաղինյանը, Ռոբերտ Հակոբյանը եւ Արամ Հովհաննիսյանը հանդիպեցին լրագրողների հետ եւ ներկայացրին փառատոնի ծրագիրն ու իրենց մասնակցությունը նման կարեւոր միջազգային փառատոնին, որի շնորհիվ հնարավոր է լինում ծանոթանալ ու նաեւ մասնակցել տարբեր երկրներում անցկացվող նմանատիպ փառատոներին: Այս տարի թատերասերները հնարավորություն կունենան դիտել 17 ներկայացում՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսրայելի, Լիտվայի, Եգիպտոսի եւ Հայաստանի դերասանների մասնակցությամբ:

Փառատոնը կբացի ճանաչված դերասան Ֆիլիպ Հոխմայերը (Գերմանիա) «Վերթեր» մոնոներկայացմամբ: Փառատոնին հրավիրվել է մասնակցելու Մոսկվայի Եվ. Վախթանգովի անվան դրամատիկական թատրոնի դերասան Յուրի Կրասկովը՝ «Լսելով հեռուն» մոնոներկայացմամբ: Բացի այդ Ռուսաստանից, փառատոնին հանդես կգա նաեւ դերասանուհի Իրինա Եվդոկիմովան՝ «Ոչ ոք» մոնոներկայացմամբ: Առաջին անգամ փառատոնին կմասնակցեն դերասաններ Եգիպտոսից՝ Սամաա Իբրահիմը՝ «Կարմեն», Իսրայելից՝ Հովարդ Ռիպը «Զիմփել հիմարիկը» մոնոներկայացումներով: Տարեցտարի փառատոնին մասնակցելու ե՛ւ ցանկությունը, ե՛ւ աշխարհագրությունն ընդլայնվում են, ու հետաքրքրությունը մեծանում, վկան տարբեր երկրներից ստացված մասնակցության հայտերն են, որոնց շատ հետաքրքրում են հայկական թատերարվեստը:

Փառատոնը իսկական տոն է թատերասերների համար, ու կազմակերպիչները խոստացան, որ տոնը կկայանա, որովհետեւ փառատոնին մասնակցում են նախնական ընտրությամբ անցած եւ երիտասարդ ու արդեն թատերարվեստում իրենց խոսքն ասած դերասաններ: Փառատոնին Ֆրանսիայից մասնակցում է Ժան Պոլ Շինտուն՝ «Առաջին մարդը», Լեհաստանից Գաբրիելա Մուսկալան, «Բուենոս Այրեսից վերադառնալիս», Լիտվայից Բիրուտե Մարն «Ունե» մոնոներկայացումներով եւ այլք:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Նշվեց Գեղամ Գրիգորյանի 60-ամյակը

Հանրահայտ տենոր **Գեղամ Գրիգորյանը** 60 տարեկան է: Չորեքշաբթի երեկոյան՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կազմակերպվել էր հոբելյանական միջոցառում՝ նվիրված Հայաստանի ժողովրդական արտիստ եւ Լիտվայի վաստակավոր արտիստ Գեղամ Գրիգորյանի ստեղծագործական գործունեության 40-ամյակին եւ ծննդյան 60-ամյակին: Հոբելյանական երեկոյին ներկա էր նաեւ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Մինչ միջոցառման մեկնարկը հանրապետության նախագահը Գեղամ Գրիգորյանին պարգեւատրեց Հայրենիքին մատուցած ծառայությունների համար առաջին աստիճանի շքանշանով: Երեկվա համարում «**Ազգը**» գրել է այս մասին: Երեկոյի ընթացքում ցուցադրվեց Գեղամ Գրիգորյանի մասին պատմող տեսաշար, միջոցառումը նաեւ բաղկացած էր համերգային ծրագրից:



Լրագրողների հետ զրույցի ժամանակ Գեղամ Գրիգորյանն իր 40 տարվա գործունեությունը գնահատեց հետեւյալ ձեւով. «Ես ի՞նչ իրավունք ունեմ գնահատելու իմ անցած ճանապարհը»: Իսկ երազանքների մասին խոսելիս նշեց, որ երազում է ունենալ իր դպրոցն ու ակադեմիան:

Գեղամ Գրիգորյանը ելույթ է ունեցել աշխարհի լավագույն բեմերում, նա համարվում է 20-րդ դարի 40 լավագույն տենորներից մեկը, եւ նրա անունը գրվում է այնպիսի հայտնի տենորների կողքին, ինչպիսին են Պլասիդո Դոմինգոն ու Լուչիանո Պավարոտին:

Կոմպոզիտոր **Մարտին Վարդազարյանը**, որը նույնպես դահլիճում էր, լրագրողների հետ զրուցելիս Գեղամ Գրիգորյանի մասին ասաց հետեւյալը. «60 տարեկան դառնալուց հետո մի նոր փուլ է սկսվում: Ով մի անգամ լսել է նրա ձայնը, էլ երբեք չի մոռանա ու նրան նորից լսելու եւ տեսնելու պահանջ կունենա»: Ապա կոմպոզիտորը հավելեց. «Զարմանալի է, որ այդպիսի ձայն ու նման բաց հայացք ունեցող Գեղամ Գրիգորյանն արդեն 60 տարեկան է»:

Ստեղծագործական անսպառ եռանդ, եւս 60 տարիների կյանք ու բազմաթիվ հաջողություններ մաղթեց Մարտին Վարդազարյանը հոբելյարին:

Գեղամ Գրիգորյանը հայ մշակույթի մեջ նշանակալի ավանդ ունի եւ մեծ ձեռքբերումներ՝ օպերային երգարվեստում: Չորեքշաբթի կազմակերպված երեկոն նրա անցած ճանապարհի համեստ գնահատանքն էր:

Ի.Պ.

# Ռուդոլֆ Խառատյանը նաեւ գեղանկարիչ

«Նովոստի-Արմենիա» մամուլի ակումբը հյուրընկալել էր անվանի բալետմայստեր, Հայաստանի Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր խորեոգրաֆ, բազմաթիվ մրցանակների դափնեկիր **Ռուդոլֆ Խառատյանին**: Վերջինիս ստեղծագործական ուղուն, բալետային ժանրում, «**Ազգը**» հանգամանալից անդրադարձել է: Իսկ այժմ մեր ընթերցողներին ենք ուզում ներկայացնել Ռուդոլֆ Խառատյան գեղանկարչին, որի աշխատանքները 1995-ից սկսվել է լայն հետաքրքրություն առաջացնել ԱՄՆ-ում (Վաշինգտոն, Նյու Յորք), Կանադայում բացված 22 անհատական ցուցահանդեսների շնորհիվ: Բացի դրանից, Ռ. Խառատյանը մի քանի տասնյակ խմբակային ցուցահանդեսների է մասնակցել արտերկրներում, որտեղ նրան բացի բալետմայստեր ճանաչելուց, գիտեն նաեւ որպես Ամերիկայի հայ նկարիչ: Ինչպես նշեցին ՀՀ մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ **Սոնա Հարությունյանը** եւ «Ակադեմիա» պատկերասրահի տնօրեն **Գոռ Վարդանյանը** տեղեկացրին, որ Ռուդոլֆ Խառատյանը համագործակցում է պետական կառույցների հետ եւ ապրիլի 1-ին, Խառատյանի ծննդյան օրը, Երեւանում բացվեց անդրանիկ անհատական ցուցահանդեսը՝ մայր հայրենիքում: «Ակադեմիա» պատկերասրահը 15 օր անընդմեջ բացելու է Խառատյանի կերպարվեստի երկրպագուների առաջ, որտեղ ցուցադրված կլինեն գեղանկարչի վերջին տարիներին ստեղծված 52 աշխատանքները:

Պրն Խառատյանը պատասխանելով «**Ազգի**» հարցերին ասաց, որ նկարել սկսել է 7 տարեկանից, մինչեւ բալետի աշխարհ մուտք գործելը: Հինգ տարի «Պիոներ պալատի» քանդակի խմբակ. ընկեր Սոսի մոտ է հաճախել ու ուսանել քանդակի ստեղծման գաղտնիքներն ու իմաստությունները: Հետո Լեւոն Վարդանյանի նկարչական ստուդիայում դասընթացների է հաճախել: Այդ ժամանակ հայտնվում է պարարվեստի ստուդիայում ու սկսվում է նրա բալետային կարիերան, զուգահեռ խորացնելով նկարելու իմաստությունները: Խառատյանը երբեք պարը չի գերադասել նկարչությունից. «այդ երկուսն էլ ես օգտագործում եմ իմ ստեղծագործություններում, քանզի դրանք իրար լրացնում են, օգնում են ինձ ավելի ճիշտ զգալ ու մատուցել այն՝ թե՛ բալետում, թե՛ գեղանկարչության մեջ: Դա է պատճառը, որ ես չեմ գերադասում մեկը մյուսից եւ երկուսն էլ ինձ հոգեհարազատ են: Նկարչության մեջ գործ ունես ներկերի հետ, իսկ բալետում՝ մարդկանց: Օրեցօր ստեղծագործելու մակարդակը բարձրացնելու, ճիշտ ուղղության վրա դնելու խնդիր ունեմ, իսկ բալետում դժվար է, որովհետեւ պարողներն էլ պետք է հասկանան ինձ, զգան թե ի՞նչ եմ ուզում նրանից ու հենց դա էլ փոխանցեն պարին: Այ դա շատ բարդ է: Իսկ նկարելուց ես զգում եմ, որ գույները ինձ շատ օգնում են, թելադրում են անգամ գաղափարը: Երբ կտավի մոտ եմ դեռ չգիտեմ, թե ինչ գույնով եմ սկսելու: Ինձ պետք չէ մուսա, կամ ալկոհոլ... Նստում եմ, կենտրոնանում եւ նկարելու ցանկությունը ինքնին գալիս է ու վրձինը կարծես ինքն իրեն է շարժվում կտավի վրա: Իմ նկարներում իմ աշխարհն է, որը լի է շատ դրական լիցքերով ու գույների երանգներով ես այդ լիցքերը փոխանցում եմ մարդկանց, նրանց մեջ սեր ու բարություն արթնացնում: Հիմնականում ես փորձում եմ իմ նկարներում մարմնի ներքին զգացողությունը ներկայացնել գունային երանգներով, այլ ոչ թե շեղ գծերով: Ինձ համար եւ բալետը եւ նկարչությունը հզոր արտահայտչամիջոց են մեկը՝ շարժման միջոցով էներգետիկան է, որ դառնում է գույն, մյուսը՝ ստատիկ վիճակն է գույների համադրությամբ: Երկուսն էլ ժամանակի ու տարածության գաղափարին են ծառայում անկախ միջոցներից»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ



# «Կոմիտասյան ռազմական հարձակումը» կկսվի դեղատներից

Կոմպոզիտոր, կոմիտասագետ Արթուր Շահնազարյանն ուսումնասիրել է Կոմիտասի խազերը, ինչի շնորհիվ կարողացել է մշակել 12 շարականներ ու փոխադրել դրանք ժամանակակից նոտագրության համակարգի: Այս մասին երեկ՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց **Արթուր Շահնազարյանը**: «Հենարան» ակումբում նա նշեց, որ թողարկվելու է նոր ձայնասկավառակ, որտեղ զետեղված են լինելու հենց այդ 12 շարականները: «Նարեկացի» միության հիմնադիր-նախագահ **Նարեկ Հարությունյանն** էլ նշեց, որ նախագիծն իրականացվում է «Նարեկացի» միության հետ համատեղ. «Եթե Աստված հաջողի 2-3 ամսից ձայնասկավառակը կթողարկվի»: Խտասալիկը ներառելու է նաեւ գրավոր բացատրություններ:

Այնուհետեւ Արթուր Շահնազարյանը բացատրեց, որ 1000 տարի առաջ մեր երգերը խազերով են նոտագրել, եւ Կոմիտասը զբաղվել է խազերի վերծանությամբ:

Արթուր Շահնազարյանի փոխանցմամբ՝ բացի վերոնշյալ սկավառակից նախատեսվում է թողարկել մեկ այլ ձայնասկավառակ, որտեղ ներառված կլինեն Կոմիտասի 5 երգերը: Սա թողարկվելու է հազարավոր օրինակներով ու բաժանվելու է անվճար՝ այն էլ դեղատներում: Կոմիտասագետն ասում է, որ այդպես «կոմիտասյան հարձակում» են սկսելու, իսկ խտասալիկը, որը բաժանելու են դեղատների հաճախորդներին, կոչվելու է «անտիվիրուս»: Բանախոսների կարծիքով՝ սկավառակների միջոցով հնարավոր կլինի ազդել մարդկանց հոգեւոր աշխարհի ու ճաշակի վրա: «Կոմիտասն ուղղակիորեն ազդում է մեր հոգու, նաեւ օտարների վրա», հավելեց Նարեկ Հարությունյանը: Իսկ Կոմիտասյան զորակոչի մասին, ըստ Ա. Շահնազարյանի, կտեղեկացվի նախօրոք. «Հետո արդեն կանցնենք հարձակման»:

Ի.Պ.

# Երիտասարդական հավաքականի մարզչի հարցը շուտափույթ լուծում է պահանջում

Երեք հանդիպումներով մեկնարկեց ֆուտբոլի Եվրոպայի 2013-ի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարը: Խաղերից մեկը կայացավ ընտրական 3-րդ խմբում, որտեղ ընդգրկված է Հայաստանի երիտասարդական հավաքականը: Անդորրայի ընտրանին սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջեց Ուելսի հավաքականին: Հանդիպման ելքը վճռեց 21-րդ րոպեին անդորրացի Արմանդ Ֆախարդոյի ինքնագոլը:




Կայացած մյուս երկու հանդիպումներում գրանցվեցին խոշոր հաշիվներ: 1-ին խմբում Կիպրոսի հավաքականը 6 անպատասխան գնդակ խփեց Սան Մարինոյի ընտրանու դարպասը: Իսկ 7-րդ խմբում թուրքերը 6-1 հաշվով պարտության մատնեցին Լիխտենշտեյնի հավաքականին:

Ընտրական մրցաշարն արդեն մեկնարկել է, իսկ Հայաստանի երիտասարդական հավաքականը դեռեւս գլխավոր մարզիչ չունի, մինչդեռ մյուս մրցակիցներն արդեն իրենց ուժերն են ստուգում ընկերական հանդիպումներում: Հիշեցնենք, որ ՀՀ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ֆլեմինգ Սերիցլեւը, որի գլխավորությամբ մեր ընտրանին բավական հաջող մրցելույթներ ունեցավ Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական նախորդ մրցաշարում, անցած տարեվերջին հեռացավ Հայաստանից՝ աշխատանքի անցնելով Իրանում:

Ըստ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի, ֆեդերացիան բանակցում է արտերկրի հանրահայտ մասնագետներից մեկի հետ: Նա խոստացել էր, որ վիճակահանությունից հետո հայտնի կդառնա ՀՀ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչը: Սակայն մինչ օրս հարցը դրական լուծում չի ստացել: Նաեւ հայտարարվել էր, որ եթե չհաջողվի «դրսից» մարզիչ հրավիրել, ապա հավաքականի ղեկը կվստահվի տեղացի մասնագետի: Կարծում ենք, վերջին տարբերակի դեպքում կարելի է երիտասարդական հավաքականի ղեկը վստահել Աբրահամ Խաշմանյանին, որը բավական բեղմնավոր մարզչական գործունեություն է իրականացնում:

Հիշեցնենք, որ Հայաստանի երիտասարդական հավաքականն ընդգրկված է ընտրական 3-րդ խմբում, որտեղ մրցելու է Չեխիայի, Ուելսի, Չեռնոգորիայի եւ Անդորրայի հավաքականների հետ: Կարծում ենք, որ կարելի է հաջող մրցելույթներ ակնկալել մեր երիտասարդ ֆուտբոլիստներից, որոնցից շատերն իրենց լավ դրսեւորեցին ընտրական նախորդ մրցաշարում եւ տարիքային առումով կարող են մասնակցել նաեւ 2013-ի ընտրական մրցախաղերին: Միայն անհրաժեշտ է ամենայն պատասխանատվությամբ մոտենալ հավաքականի խնդիրներին, շուտափույթ լուծել գլխավոր մարզչի հարցն ու լրջությամբ նախապատրաստվել առաջիկա հանդիպումներին: Մեր ֆուտբոլիստներն ընտրական մրցաշարում մեկնարկելու են հունիսի 7-ին Երեւանում Չեռնոգորիայի հավաքականի հետ կայանալիք հանդիպումով:

# Մուրթազալիեւի մեդալը միակն էր

**Դորտմունդում մրցավեճն ավարտեցին Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը վիճարկող ազատ ոճային ըմբիշները: Մրցումների 2-րդ օրը առաջնության պարգեւները վիճարկեցին փաշային չորս կարգերի ըմբիշները: Ցավոք, Հայաստանի ըմբիշները շատ անհաջող ելույթներ ունեցան ու անմասն մնացին խաղարկվող պարգեւներից:**



**Մինչեւ 55 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացրեց Միհրան Ջաբուրյանը: Առաջին գոտեմարտում Միհրանը 5-4 հաշվով հաղթեց բուլղարացի Ռադոսլավ Վելիկովին: Սակայն քառորդ եզրափակիչի արգելքը հաղթահարել նրան չհաջողվեց: Այդ փուլում հայ ըմբիշը պարտվեց Բելառուսը ներկայացնող Վլադիսլավ Անդրեեւին: Վերջինս պարտվեց կիսաեզրափակիչում, ուստի Ջաբուրյանը զրկվեց նաեւ բրոնզե մեդալի համար պայքարը շարունակելու հնարավորությունից: Իսկ Անդրեեւն արժանացավ բրոնզե մեդալի:**

**Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Ջամալ Օտարսուլթանովը, որը եզրափակիչում առավելության հասավ վրացի Վլադիմիր Խինչեգաշվիլու նկատմամբ:**

**Անհաջող էր նաեւ Ժիրայր Հովհաննիսյանի ելույթը: Մինչեւ 66 կգ քաշային կարգում Ժիրայրն առաջին իսկ գոտեմարտում պարտվեց ռուսաստանցի Ադամ Բատիրովին, որն արժանացավ բրոնզե մեդալի: Քաշային այս կարգում ուժեղագույնն ադրբեջանցի Ջաբրաիլ Հասանովն էր, որը եզրափակիչում հաղթեց բուլղարացի Լեոնիդ Բազանին: Բրոնզե 2-րդ մեդալը բաժին հասավ Գերմանիան ներկայացնող Սաբա Ջավադ Բոլագիին:**

**Մինչեւ 84 կգ քաշայինների մրցավեճում Հաբեթնյակ Կուրղինյանը 2 գոտեմարտ անցկացրեց: Առաջինում նա հաղթեց բելառուսցի Ալեքսեյ Իսաեւին, 2-րդում պարտվեց շվեյցարացի Մարկո Ռիսենին: Չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Անզոր Ուրիշեւը, որը վճռորոշ գոտեմարտում պարտության մատնեց վրացի Դաթո Մարսագիշվիլուն: Բրոնզե մրցանակակիրներ դարձան ռումինացի Ստեֆան Գեորգիտան եւ ադրբեջանցի Շարիֆ Շարիֆովը:**

**Հայաստանի վերջին պատվիրակին էլ՝ գերծանրքաշային Ռուսլան Բասիեւին չհաջողվեց 2 գոտեմարտից ավելի անցկացնել: Առաջինում նա հաղթեց իսպանացի Խոսե Վասքուեզին, 2-րդում պարտվեց ադրբեջանցի Ջամալադին Մագոմեդովին:**

**Գերծանրքաշայինների պայքարում ոսկե մեդալի արժանացավ թուրք Ֆաթիհ Չաքիրօղլուն՝ եզրափակիչում հաղթելով բելառուսցի Ալեքսեյ Շեմարովին: Բրոնզե մեդալներ ստացան հունգարացի Դանիել Լիգետին եւ ադրբեջանցի Ջամալադին Մագոմեդովը:**

**Ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին տեղը գրավեց Ռուսաստանի հավաքականը, որը նվաճեց 4 ոսկե, մեկական արծաթե եւ բրոնզե մեդալ: 2-րդ տեղում Ադրբեջանի հավաքականն է, որի հաշվեկշռում կա 2 ոսկե, 3 բրոնզե մեդալ: Թուրքերը նվաճել են 1 ոսկե մեդալ: Հայաստանի հավաքականը 7-8-րդ տեղերն է բաժանում ալբանացիների հետ նվաճած 1 արծաթե մեդալով:**

# Հայ շախմատիստները հետապնդողի դերում են

**Մեկօրյա հանգստից հետո շախմատի Եվրոպայի առաջնության մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջը՝ անցկացնելով 8-րդ տուրի հանդիպումները: Հայաստանցի շախմատիստներից հաղթանակներ տոնեցին միայն երկուսը՝ հանրապետության անցյալ եւ այս տարվա չեմպիոններ Ավետիք Գրիգորյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը: Գրիգորյանն իր առավելությունը հաստատեց Ալին Բերեսկուի նկատմամբ, իսկ Հովհաննիսյանը պարտության մատնեց Ալեքսանդր Պոտապովին:**

**Սարգսյան-Հալկիաս, Տեր-Սահակյան-Հակոբյան, Անդրեասյան-Յանսա, Մազե-Փաշիկյան եւ Դուբոյա-Պողոսյան պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Միակ պարտությունը կրեց Հրանտ Մելքումյանը՝ զիջելով Ալեքսանդր Ֆաուլանդին:**

**Հայաստանի շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Գաբրիել Սարգսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Արման Փաշիկյանը, Ավետիք Գրիգորյանը, Սամվել Տեր-Սահակյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը, որոնք վաստակել են 5-ական միավոր:**

**Առաջատարների խմբում նեղվածք է: 6,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Վլադիմիր Պոտկինը, Մարկուս Ռագերը, Վիորել Յորդաչեսկուն, Էմիլիան-Միրչեա Պարլիգրասը, Ռաուֆ Մամեդովը եւ Նիկիտա Վիտյուգովը: 6 միավոր ունեցող շախմատիստների թվում են ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանը եւ Ֆրանսիան ներկայացնող Տիգրան Ղարամյանը: Արթուրը պարտության մատնեց Վիկտոր Բոլոգանին, իսկ Տիգրանն առավելության հասավ Դավիթ Նավարայի նկատմամբ: Մրցաշարի ավարտին մնացել է 3 տուր:**



# Աբրահամն ու Ուորդը մարտականորեն են տրամադրված

**Ինչպես արդեն տեղեկացրել ենք, երկրորդ միջինքաշային կարգի Super Six մրցաշարի կիսաեզրափակիչ հանդիպումն Արթուր Աբրահամի եւ Անդրե Ուորդի միջեւ կայանալու է ԱՄՆ-ի Կարսոն քաղաքում մայիսի 14-ին: Այդ մենամարտին էր նվիրված Լոս Անջելեսում կազմակերպված մամուլի ասուլիսը, որին ներկա էր միայն Անդրե Ուորդը: Արթուրը հիվանդության պատճառով չէր մեկնել ԱՄՆ, ուստի հեռուստակամուրջ էր կազմակերպվել:**

**«Մեծ պատասխանատվությամբ եմ նախապատրաստվում առաջիկա մենամարտին: Իմ խնդիրն է հենց սկզբից զինաթափ անել մրցակցիս, որպեսզի Արթուրն իրեն զգա այնպես, ինչպիսի զգացումներ ունեցավ Կառլ Ֆրոչի հետ մենամարտից հետո: Չեմ հավատում այն մարդկանց, որոնք կարծում են, թե Արթուր Աբրահամն այլեւս այն ներուժը չունի: Հասկանում եմ, որ Արթուրն իր թիմի հետ եւս լրջորեն է նախապատրաստվում առաջիկա մենամարտին ու ցանկանում է ինձ անակնկալ մատուցել: Սակայն պատրաստ եմ պաշտպանել տիտղոսս: Ամեն ինչ կրկնվում է. մարդիկ կասկածանքով են վերաբերվում ինձ ու հարցնում են, թե արդյոք պատրա՞ստ եմ մենամարտին: Կարծում եմ, նրանք մոռանում են, որ ես պետք է կերակրեմ ընտանիքս, ուստի ինձ եւս շատ է անհրաժեշտ հաղթանակը: Միայն երկու մենամարտ է ինձ բաժանում երկրորդ միջինքաշային կարգում ուժեղագույնի տիտղոսից: Եվ ես մտադիր եմ երկու մենամարտերում էլ հաղթել», հայտարարել է Անդրե Ուորդը:**

**«Մենք նախապատրաստվում ենք լավ մենամարտի: Նախորդ մարզումային մենամարտը շատ կարճ տեւեց եւ ինձ չտվեց այն, ինչին ձգտում էի: Սակայն սարսափելի ոչինչ չկա: Գիտեմ, որ առաջիկա մենամարտում Ուորդին են համարում հաղթողի գլխավոր հավակնորդը: Դա նույնիսկ լավ է ու լրացուցիչ խթան է ինձ համար: Քիչ չեն դեպքերը, երբ հաղթողի հավակնորդները չեն արդարացնում սպասելիքները: Չեմ ցանկանում անդրադառնալ անցյալին: Ցանկանում եմ կենտրոնանալ Անդրեի վրա: Կօգտագործեմ քաջությունս, բռունցքներս, իմ մարմինը մրցակցին հաղթելու համար: Անհամբերությամբ եմ սպասում ԱՄՆ ժամանելուն: Կներդնեմ ուժերիս 120 տոկոսը: Իմ հայ երկրպագուների աջակցությամբ կնվաճեմ երկրորդ միջինքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը ու կմտնեմ եզրափակիչ: Հայ երկրպագուները մեծ խթան կլինեն ինձ համար: Դա մենամարտին առանձնահատուկ բնույթ կհաղորդի: Ես նրանց հուսախաբ չեմ անի», նշել է Արթուր Աբրահամը:**

# Կառլեն Մկրտչյանը կխաղա «Մետալուրգում»

**Ինչպես տեղեկացանք «Փյունիկ» ակումբից, թիմի եւ ՀՀ հավաքականի կիսապաշտպան Կառլեն Մկրտչյանը այսօր կմեկնի Դոնեցկ, որտեղ 3 տարվա պայմանագիր կկնքի տեղի «Մետալուրգի» հետ: Ժամանակին «Մետալուրգում» են ընդգրկվել «Բանանցի» ֆուտբոլիստներ Սամվել Մելքոնյանը, Արա եւ Արամ Հակոբյանները, Արարատ Առաքելյանը, Արտակ Դաշյանը, սակայն նրանցից ոչ մեկին չի հաջողվել ամրապնդվել թիմում: Միայն Հենրիխ Մխիթարյանն է իրեն հիանալի դրսեւորել «Մետալուրգում», որտեղից էլ տեղափոխվեց «Շախտյոր»: Հիշեցնենք, որ Կառլեն Մկրտչյանը ձմռանը փորձաշրջան անցավ «Կուբանում», սակայն վնասվածքի պատճառով ստիպված էր վերադառնալ Երեւան: Նախատեսվում էր, որ նա ամռանը կմեկնի Կրասնոդար, սակայն «Մետալուրգն» ավելի շուտ հրավիրեց Կառլենին:**



# Ուկրաինայի հավաքականի ղեկն առայժմ թափուր է

Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Գրիգորի Սուրկիսը գործկոմի նիստում հայտարարել է, որ ազգային հավաքականի նոր գլխավոր մարզիչը հայտնի կդառնա ապրիլի 21-ին: Մինչ այդ նախատեսվում է ավարտել բանակցությունները այդ պաշտոնի թեկնածուների հետ եւ որոշում կայացնել:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա փետրվարին Ուկրաինայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ էր նշանակվել Միրոն Մարկեւիչը, որը նաեւ գլխավորում էր Խարկովի «Մետալիստը»: Երբ օգոստոսին Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիան «Մետալիստին» զրկեց 9 միավորից եւ տուգանեց 25 հազար դոլար, Մարկեւիչն ի նշան բողոքի, հեռացավ հավաքականից: Որպես մարզչի պաշտոնակատար՝ հաստատվեց Մարկեւիչի օգնական Յուրի Կալիտվինցեւը: Իսկ Սուրկիսը սկսեց նոր գլխավոր մարզչի փնտրտուքները:

Անցած տարեվերջին իտալական լրատվամիջոցները տեղեկացրին, որ Սուրկիսը բանակցում է Մարչելո Լիպպիի հետ: Վերջինս ներկա էր գտնվել Ուկրաինայի հավաքականի ընկերական մի քանի մրցախաղերին: Ըստ իտալական լրատվամիջոցների, Լիպպին պայմանագիր պետք է կնքեր այս տարվա հունվարին եւ աշխատեր մինչեւ Եվրո-2012-ի ավարտը: Նրա տարեկան աշխատավարձը կազմելու էր 7,5 մլն եվրո: Սակայն ուկրաինական կողմը աշխատանքի ողջ ժամկետի համար առաջարկել էր 5 մլն եվրո՝ ներառյալ նաեւ պարգեւավճարները:

Այս ընթացքում Ուկրաինայում մեծ թիվ են կազմում Օլեգ Բլոխինի կողմնակիցները, որոնց կարծիքով հենց վերջինս պետք է կրկին վստահվի հավաքականի ղեկը: Նրանցից մեկն էլ ուկրաինական պրեմիեր լիգայի նախագահ Վիտալի Դանիլովն է:

«Կալիտվինցեւը տաղանդավոր է, սակայն մարզչական փորձ քիչ ունի: Մեր հավաքականին անհրաժեշտ է Օլեգ Բլոխինը: Նա միակ մարզիչն է, որի գլխավորությամբ հավաքականը հիանալի անցկացրեց ընտրական մրցախաղերն ու արժանապատվորեն հանդես եկավ աշխարհի առաջնությունում», նշել է Դանիլովը:

Հիշեցնենք, որ 2006-ին Գերմանիայում կայացած աշխարհի առաջնությունում Ուկրաինայի հավաքականը Բլոխինի օրոք հասավ մինչեւ քառորդ եզրափակիչ, սակայն հետագայում 2008-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարը տապալեց: Դրանից հետո Բլոխինը հեռացավ հավաքականից, որն այլեւս նշանակալի հաջողությունների չհասավ:

Ինչ վերաբերում է Օլեգ Բլոխինին, ապա նա հայտարարել է, որ ֆեդերացիայի ներկայացուցիչներից ոչ մեկն իր հետ չի բանակցել հավաքականի հարցով:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

ԱՊՐԻԼՅԱՆ

## Գրախոսական... գյուղոլորտի շուրջը

*Կեսլուրջ-կեսկատակ թեմայով*

Այսօր երգիծելու օրն է: Ընդունված կարծիք կա, որ երգիծաբանները իրենց ասելիքը գտնում ու տեսնում են առօրյա կյանքում, մարդկանց հարաբերություններում, պաշտոնյաների գործերում ու գրագրություններում, մի խոսքով՝ ամենուր: Երգիծաբաններից ոմանք իրենց ասելիքում այնպիսի վիճակների են հասնում, որ չես զգում՝ կատակում են, թե՞ ողբում:

Պարզվում է՝ մեր պետական կառույցներում էլ են աշխատում մարդիկ, ովքեր ոչ միայն լրջմիտ պահվածք, այլեւ հումորի յուրահատուկ զգացում ունեցող պաշտոնյա այրեր են: Հենց թեկուզ մեր հարազատ գյուղատնտեսության նախարարությունում, որը պատահականորեն ենք ընտրել, հայցելով, ասենք, էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների ներողամտությունը:

Ծանոթացեք, թե ինչ նուրբ զգացումներով է կազմվել սույն կառույցի գիտատեխնիկական խորհրդի հրատարակած «Հայաստանի գյուղատնտեսությունը» գիրքը, որը, պարզվում է, կարող է օգտակար լինել Հայաստանի տնտեսության ագրարային ոլորտով հետաքրքրվողների, մասնագետների եւ ուսանողների համար: Վերջիններս, օրինակ, որտեղի՞ց կարող էին տեղեկանալ, որ իրենց սիրելի Հայաստանի պետական ագրարային համալսարանը յուրաքանչյուր տարի պատրաստում է բարձր որակավորում ունեցող ավելի քան 1500 մասնագետ 34 մասնագիտությունների գծով: Գյուղխորհրդի գնահատմամբ սակավահող հռչակվող այս երկրի գյուղական տնտեսությունը թերեւս չի դիմանում նման ներուժին ու ներսից խմորվում է այնպես, որ յուրահատուկ բումնունք է ստացվում: Նորընծա մասնագետներն այնպիսի բարձր որակավորում ունեն, որ ուսումնառության ավարտից հետո նրանցից անգամ լավագույններին չեն հասցնում աշխատանքի վերցնել: Նման բան թերեւս հաջողվում է նախարարության համակարգում գործող 7 գիտական կազմակերպություններին, որոնցում ընդգրկված են 249 գիտաշխատողներ, այդ թվում՝ գիտության 25 դոկտորներ եւ 122 թեկնածուներ: Այդ նրանց ջանքերի շնորհիվ են ստացվել աշնանացան ցորենի «Ախթամար», «Վիկտորիա», «Արմսիմ», գարու «Մուշ», «Ուտիք-2», «Սասուն» սորտերը: Եթե դոկտորներից 1-2-ին նկատեն ու եթե ոչ ակադեմիկոսի, գոնե ԳԱԱ-ի թղթակից անդամի կոչման ներկայացնեն, իրենք էլ հայ հողի մշակին կնկատեն, նրա հոգսով լիարժեք կապրեն:

Հուզական տրամադրություն չցուցաբերելով շարունակենք, քանզի չեն մոռացվել նախարարության համակարգի 10 պետական քոլեջները, ուր 3500 սովորողներ մասնագիտանում են ոլորտի 23 ուղղություններով: Հաշվի առնելով երկրի ագրոպարենային համակարգի ձեռնարկությունների պահանջարկը մի շարք մասնագիտությունների նկատմամբ, վերջին տարիներին քոլեջների ուսումնական գործընթացում ներառվել են «Թարգմանություն եւ մաքսավարում», «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» եւ համանման նոր մասնագիտություններ, որոնք մի կերպ կարողացա վերարտադրել: Հաջորդ պարբերությունը հետեւյալ տեսքն ունի:

Գյուղատնտեսական քաղաքականության վերաբերյալ առավել հստակ պատկերացում ունենալու, ֆերմերներին ու սննդի վերամշակման արդյունաբերությանը անկողմնակալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով ՀՀ գյուղնախարարության գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի տեղեկատվության ու լրատվության բաժինը հրատարակում է «Ագրոգիտություն» ամսագիրը եւ «Ագրոլրատու» թերթը. յուրաքանչյուր շաբաթ «Ագրո TV»-ն եթեր է հեռարձակում գյուղատնտեսությանը նվիրված հեռուստատեսային հաղորդումներ:

Այլապես աշխարհը որտեղի՞ց իմանա, որ Հայաստանի ագրարային ոլորտի ներկա վիճակը լայն հնարավորություններ է ստեղծում ագրոբիզնեսի տարբեր ճյուղերում գործարարության զարգացման համար: Փորձենք թվարկել այն հիմնական ուղղությունները, որտեղ, գիտխորհրդի հավաստմամբ, ներդրումներ կատարելը շահեկան է.

- մթերքի արտադրություն եւ իրացում (ներմուծողների հախից գանք),
- կաթնային ֆերմաների ստեղծում (կաթի փոշին մոռացնել տանք),
- պանրի, մասնավորապես շվեյցարական, հոլանդական, ռոկֆոր եւ այծի պանրի արտադրություն (հայկականները զուտ ազգային են):

Ազգային են նաեւ մեր մեղուները, որի մասին տեղեկացնում է գիտխորհուրդը: Պարզվում է՝ 5-10-րդ դարերի հայոց պատմության մեջ վկայություններ կան, որ օտար զավթիչների դեմ ազատագրական կռիվներ մղելիս հայերն օգտագործել են նաեւ մեղուներ, այնպես որ «մերն ուրիշ է»-ն հեռավոր դարերից է գալիս: Թերահավատների համար նշեմ. անդնդախոր կիրճերով կամ ստորոտներով անցնելիս՝ բարձր տեղերից նախ հակառակորդի հեծելազորի վրա են գլորել մեղուներով լցված քթոցներ... շարունակելն անիմաստ եմ գտնում՝ ընթերցողի հանդեպ հարգանքից ելնելով:

Գիտատեխնիկական խորհուրդը տեղեկացնում է, որ ՀՀ կառավարությունը 2007 թ. մարտին հաստատել է «ՀՀ տավարաբուծության զարգացման 2007-2015 թթ ծրագիր»-ը: Արդեն 2007-2008 թթ այս ծրագրի իրականացումը տվել է իր դրական արդյունքները: Կարդացեք՝ ինչպես. ֆերմերները խանդավառված են այս ծրագրով եւ խոստովանում են, որ ներդրված միջոցների փոխհատուցումը բավականին բարձր է. գնորդները տեսնում են, այնպես որ խոստովանության կարիք չկա:

Գրախոսականի տեսքով կազմված սույն մեջբերումները թե ինչքանով են համահունչ ապրիլմեկյան տրամադրություններին, թող որոշի ընթերցողը: Մի հարցում գիտխորհրդին հարկավոր է հատկապես շնորհակալ լինել. Հայաստանի բնակչության թիվը նշելու, այն է՝ մեր 3,2 մլն լինելու համար: Իսկ թե ինչո՞ւ են այլ երկրներում ապրող հայերը գյուղգիտխորհրդին հետաքրքրել, որոնք 5 մլն են ներկայացվել, երբ հիշատակվում է 8-9 մլն, անհասկանալի է: Այ, եթե այս վիճակագրության փոխարեն, ասենք, երկրի անասնատեսակների հաշվառումը կազմակերպվի, դրա արդյունավետությունն առավել ակնառու կլինի:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

## Վթար ու անհայտ տուժողներ



Երեկ Արարատի մարզ տանող մայրուղու վրա իրար են բախվել բեռնատար ավտոցիստեռնը եւ «Ժիգուլի» մակնիշի ավտոմեքենան: «**Ազգը**» մայրուղու վթարի հատվածում նկատեց ճամփաբաժնին ամբողջովին ջարդուփշուր եղած կանաչ «Ժիգուլին», որը գլորվել էր ու մի քանի պտույտ անելով շրջվել էր եւ ամբողջովին սեղմված վիճակում դարձել էր պարզապես մետաղի ջարդոն: Մայթի մի մասում էլ շրջվել էր բեռնատարը, նկատելի էին մեքենայի առաջամասին հարվածից վնասված մասերը, կային փշրված ապակիներ ու արյան հետքեր: Դժվար թե այս վթարից առանց լուրջ վնասվածքների կամ գուցե զոհերի (Աստված չանի) վարորդները փրկվեին: Մարդկանց հոծ բազմությունը հավաքվել էր վթարի վայրում, ոչ ոք չէր համարձակվում մոտենալ՝ ամեն վայրկյան սպասվող պայթյունից զգուշանալով: Վթարի մանրամասներին կտեղեկացնենք վաղվա համարում:

Ս. Մ.

## Ավստրիական բանկի մրցանակը «Հայէկոնոմբանկին»

**Ինչպես տեղեկացանք «Հայէկոնոմբանկից», բանկին ավստրիական UNICREDIT BANK AG-ի կողմից շնորհվել է «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2010-ի ընթացքում եվրոյով փոխանցումների բարձր որակ ապահովելու համար:**

**«Այս մրցանակը մեկ անգամ եւս վկայում է, որ երկար տարիների համագործակցության արդյունքում «Հայէկոնոմբանկը» ձեռք է բերել կայուն, հուսալի եւ վստահելի գործընկերոջ համբավ: Մենք խորապես համոզված ենք, որ այս իրադարձությունը կունենա իր արժանի շարունակությունը՝ համագործակցության նոր ուղիներ բացելով մեր երկու բանկերի միջեւ առկա փոխշահավետ հարաբերություններում», նշել է բանկի վարչության նախագահ Արմեն Նալչյանը:**

Ա. Մ.

ՏԱՆՈՒՏՈՒՄ

## Ուժը կորցրած է ճանաչվել «ՄԵԼԱՆԻ ՄՈՔԻԱ» ՍՊԸ գրավատան լիցենզիան

Մարտի 29-ին Կենտրոնական բանկի խորհուրդը ուժը կորցրած է ճանաչել «ՄԵԼԱՆԻ ՄՈՔԻԱ» ՍՊԸ գրավատան կազմակերպման ԳԳ-Ե 169 լիցենզիան՝ գրավատան կազմակերպչի դիմումի համաձայն:

Սահմանվել է, որ որոշման ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտականությունների կատարման հետ:

«ՄԵԼԱՆԻ ՄՈՔԻԱ» ՍՊԸ եւ ֆիզիկական անձանց միջեւ կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերը կարող են սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից կողմերի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին մասի, վարկառուների կողմից վերցված վարկը եւ մինչեւ պայմանագրի լուծման պահը դրա դիմաց սահմանված տոկոսները եւ գումարի օգտագործման հետ կապված այլ վճարները մարելուց, պահատվության պայմանագրի դիմաց վճարումները կատարելուց, ներառյալ՝ գույքի պահատվության հետ կապված գրավատան կրած սովորական եւ արտակարգ ծախսերը հատուցելուց եւ գրավատան կողմից որպես գրավ կամ ի պահ ընդունված գույքը վերադարձնելուց հետո:

## Ուժը կորցրած է ճանաչվել «Մեբլե» ՍՊԸ գրավատան լիցենզիան

Մարտի 29-ին Կենտրոնական բանկի խորհուրդը «Գրավատների եւ գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի խախտումների համար ուժը կորցրած (գործողությունը դադարեցված) է ճանաչել Մեբլեե ՍՊԸ գրավատան թիվ ԳԳ-Ե 107 լիցենզիան:

## Ուժը կորցրած է ճանաչվել «ՊԱԲ» ՍՊԸ գրավատան լիցենզիան

Մարտի 29-ին Կենտրոնական բանկի խորհուրդը ուժը կորցրած (դադարեցված) է ճանաչել «ՊԱԲ» ՍՊԸ գրավատան կազմակերպման ԳԳ-Ե 138 լիցենզիայի գործողությունը՝ գրավատան կազմակերպչի դիմումի համաձայն:

Սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտականությունների կատարման հետ:

### Հայաստանում Տուրիզմի զարգացման հիմնադրամի 2010 թ. գործունեության հաշվետվություն

ՀՏԶՀ-ն գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2004 թ. ապրիլի 30-ին (գրանցման թիվ՝ 222.160.00313, վկայական՝ 03Ա064892, թիվ 002.2 փոփոխությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 19.11.2009 թ.): Գտնվելու վայրն է՝ 0010, ք. Երեւան, Վ. Սարգսյան փ. 26/3, ՀԱՄԿ-ի շենք, 3-րդ հարկ:

* Հայաստանում Տուրիզմի զարգացման հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է բազմաթիվ աշխատանքներ երկրում տուրիզմի զարգացման ուղղությամբ:

* Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե է մուծել 74,6 մլն դրամ: 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ հիմնադրամը պետբյուջեին պարտքեր չունի: Հիմնադրամի ֆինանսները առաջացել են նրա սեփականությունը հանդիսացող հիմնական միջոցների օտարումից:

* Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամը իրեն պատկանող Ստեփանավանի տուրիստական հանգրվանում կազմակերպել է ազգաբնակչության հանգիստը, որտեղ 2010 թ. ամառային ամիսներին իրենց հանգիստն են անցկացրել շուրջ 200 զբոսաշրջիկներ մեր հանրապետությունից, որի արդյունքում հիմնադրամը ստացել է 1.5 մլն դրամի մաքուր օգուտ:

* 2010 թ. ընթացքում հիմնադրամը սեփական ավտոմեքենաների շահագործումից ստացել է 7,17 մլն դրամի եկամուտ:

* Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամն իր ուժերով ազգաբնակչության եւ օտարերկրյա զբոսաշրջիկների համար կազմակերպել է բազմաթիվ էքսկուրսիաներ եւ տուրիստական միջոցառումներ Երեւան քաղաքի եւ հանրապետության տեսարժան վայրերում, ինչպես նաեւ պատմաճարտարապետական հուշահամալիրներում:

* 2010 թ. սեպտեմբեր ամսին Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ուղղակի վաճառքի ձեւով օտարվել է հիմնադրամի սեփականությունը հանդիսացող «Նաիրի» հյուրանոցի մասնաշենքի մի մասը (շենքի 45 տոկոսի չափով), իսկ մնացած տարածքում տեղավորվել են շուրջ 85 փախստական ընտանիքներ:

* Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամի անձնակազմը սերտ կապեր է ունեցել ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ մշակույթի նախարարությունների եւ Հայաստանում գործող մի շարք տուրիստական կազմակերպությունների հետ՝ մասնակցելով կազմակերպված սեմինար պարապմունքների, կլոր սեղանների, Հայաստանի զբոսաշրջության մրցունակության համաժողովին, տարածաշրջանային սեմինարին եւ այլ միջոցառումներին:

* ՀՏԶՀ-ի հոգաբարձուների խորհուրդը արձանագրում է, որ չնայած նրան, որ 2010 թ. սեպտեմբեր ամսին օտարվել է «Նաիրի» հյուրանոցի մի մասը, որի արդյունքում բավականին թեթեւացել են հիմնադրամի հոգսերը, այնուամենայնիվ, հյուրանոցի չվաճառվող մասում դեռեւս բնակվում են 85 փախստական ընտանիքներ, որոնց բնակարաններով ապահովելու հարցը դեռեւս պարզ չէ:

* Հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերը կազմել են 65.97 մլն դրամ, որից վարչակառավարչական ծախսերը՝ 9,62 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները չեն օգտվել հիմնադրամի միջոցներից:

*Հիմնադրամի տնօրեն* — *Ֆ. ՍԻՄՈՆՅԱՆ*
*Գլխ. հաշվապահ՝* — *Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

### ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
### Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի 2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի

Մեր կարծիքով Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի՝ 2010 թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, դրանք արժանահավատ են բոլոր էական առումներով, տալիս են հիմնադրամի 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին՝ ճշմարիտ ու իրական պատկերը եւ համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

*«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ*
*Տնօրեն/աուդիտոր՝Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*(աուդիտորի որակավորման վկայական թիվ 068)*
*16 մարտի, 2011 թ.*

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների, մշակվում է «Շիրակ» ՋՕԸ-ի ոռոգման նպատակով, Ախուրյան գետ՝ Շիրակի ջրանցքով-առավելագույնը 2381,0 լ/վրկ, Կառնուտի ջրամբար՝ Այգաբաց ջրանցքով՝ առավելագույնը 2500,0 լ/վրկ, Վարդաքարի ջրամբարից-առավելագույնը 228,0 լ/վրկ, Ախուրյան գետ՝ Ախուրյանի աջափնյա ջրանցքով-առավելագույնը 4000,0 լ/վրկ, Սառնաղբյուրի ջրամբարով-առավելագույնը 306,5 լ/վրկ, Բայանդուր-1 պոմպակայան՝ Ախուրյան գետից-առավելագույնը 38,1 լ/վրկ, Բայանդուր-2 պոմպակայան՝ Ախուրյան գետից-առավելագույնը 74,1 լ/վրկ, Ախուրիկ-1,3,4 պոմպակայաններ՝ Ախուրյան գետից-առավելագույնը 122,7 լ/վրկ ջրառների ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 6-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

### «ԹԻՎԻ ալիք » ՍՊԸ 2010 թ. գործունեության մասին

| | հազ. դրամ |
|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների իրացումից հասույթ (համախառն եկամուտ) ընդամենը | 121041.0 |
| այդ թվում՝ | |
| -թերթերի իրացումից | 108751.0 |
| -գովազդից | 12290.0 |
| Նվիրատվություն | 0 |
| Շահութահարկ | 2613.0 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 31.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: